Ազգ
Azg
30 ԱՊՐԻԼ 2011 ՇԱԲԱԹ 77(4696)
ISSN: 1829-1651

# Զոհվել են 3 զինծառայողներ

Ապրիլի 28-ին, ժամը 16:15-ի սահմանում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավարեւելյան (Մարտունու) պաշտպանական ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում հակառակորդի արձակած գնդակից գլխուղեղի շրջանում հրազենային մահացու վերք է ստացել ՊԲ ժամկետային զինծառայող, 1992թ. ծնված Վազգեն Կառլենի Բախշյանը:

Պաշտպանության բանակի լրատվության եւ քարոզչության բաժնից տեղեկացնում են, որ դեպքից անմիջապես հետո զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին վիրավորը մահացել է: Միջադեպի մանրամասները ճշտվում են:

Իսկ երեկ, ապրիլի 29-ին, ողջ օրվա ընթացքում ադրբեջանական առաջապահ ուժերը ինտենսիվ կերպով շարունակել են գնդակոծել ՊԲ դիրքերը, որի հետեւանքով զոհվել է եւս երկու զինծառայող, իսկ մեկը՝ վիրավորվել: Հ. Ա.

# Նոր խորհրդարանում իշխանություն-ընդդիմություն հարաբերակցությունը՝ 70:30

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




*Հանգուցյալ մեր երգիծանկարիչ Գեորգի Յարալյանի անտիպ գործերից:*

Շրջանառվող խոսակցությունների համաձայն՝ նեղ շրջանակում քննարկումների ժամանակ նախնական համաձայնություններ են ձեռք բերվել առաջիկա խորհրդարանի քարտեզի վերաբերյալ: Իհարկե, դեռ այդ քարտեզը որոշակի փոփոխություններ կկրի՝ հետագա ազդեցությունների կամ տարբեր բանակցությունների հետեւանքով: Սակայն այս պահի վերեւների պատկերացումներն ապագա խորհրդարանի վերաբերյալ այս են եւ հետաքրքրական նրանով, որ արտահոսքը տեղի է ունեցել ՀԱԿ-իշխանություն մեղրամսի ֆոնին, ինչն էլ կամ որոշ կուսակցություններին խոսք հասկացնելու համար է, որ ձեռ քաշեն առաջիկայում խորհրդարանում հայտնվելու երազանքից, կամ պարզապես ոմանց իրենց տեղը ցույց տալու գործիք: Ճիշտն ասած՝ ամեն անգամ այսպիսի տեղեկությունների մասին գրելիս մեղքի զգացում ենք ունենում հասարակ ընտրողի առջեւ, որին այս կարգի լուրերն առհասարակ կարող են կազմալուծել՝ զրկելով հեռանկարից, բայց հայաստանյան իրականությունը մեր գրել-չգրելով չի փոխվում: Մյուս կողմից էլ՝ ընտրողն հրազեկվելով զգոն կդառնա ու կմտածի իր կամքն առաջ տանել՝ ի հեճուկս վերեւների նպատակների եւ պատկերացումների:

Այսպես, ըստ այդ խոսակցությունների, ապագա խորհրդարանը բաժանվում է հետեւյալ քաղաքական ուժերի միջեւ. կոալիցիան ՝ իր երեք միավորներով, վերցնում է 70 տոկոս: Կոալիցիայի խնդիրը մնալու է՝ ով-որքան, դա կախված է լինելու նրանից, թե ով որքան ճարպիկ կգտնվի վարչական լծակներն օգտագործելիս, չնայած նախորոք հայտնի է, որ վարչական լծակի առյուծի բաժինը ՀՀԿ-ի ձեռքում է: Այս ֆոնին հետաքրքրական են ԲՀԿ-ի վերջին օրերի հայտարարությունները՝ խորհրդարանական ընտրություններին առանձին ցուցակով մասնակցելու մասին: Ընդդիմությանը խորհրդարանում վերեւներն ուզում են ներկայացված տեսնել 30 տոկոսով:

Տես էջ 2

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

# Գույք գրանցելիս առանց կրկնակի չափագրումների

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ **Աշոտ Մուսայանը** երեկ լրագրողներին ներկայացրեց կադաստրի համակարգում նախօրեին կառավարության հավանությանն արժանացրած բարեփոխումները: Հիշատակելով այս համակարգի բարեփոխումների հայեցակարգը, նա հայտնեց, որ այն ենթադրում է առաջիկայում կադաստրային տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում, համակարգի ավտոմատացում, չափագրման աշխատանքները մասնավորին հանձնում եւ այլն:

Անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրման կամ գործարքներից հետո իրավունքների պետական գրանցման ժամանակ նոր կարգով կվերանա տեղազննություն եւ չափագրումներ կատարելու անհրաժեշտությունը: Ներկայիս կարգով, ինչպես հայտնեց Աշոտ Մուսայանը, անշարժ գույքի յուրաքանչյուր գրանցում կատարելիս, կադաստրի աշխատակիցները պետք է այցելեն եւ տեղում կատարեն այդ գործողությունները: Նոր կարգով չափագրումները կիրականացվեն միայն գույքի առաջին գրանցման ժամանակ: Եթե սեփականատերը դիմում է նոր գրանցում կատարելու համար, որտեղ եթե նշված չէ գույքի մեջ կատարված փոփոխությունների մասին, ապա այդ գրանցումը կատարվում է համաձայն առաջին գրանցման ժամանակ կատարած չափագրումների:

Կրկնակի չափագրում չի իրականացվի նաեւ, եթե համայնքապետարանը, իսկ Երեւանում՝ քաղաքապետարանը, տվել է արդեն տեղազննում եւ չափագրում անցած հատակագիծ, որի հիման վրա կադաստրում կգրանցվի գույքը:

«**Ազգի**» հարցերից առաջինն այն էր, թե ինչպե՞ս պետք է կադաստրում գրանցվի գույքը, եթե սեփականատերը փոփոխություններ է կատարել, բայց դրա մասին չի տեղեկացրել: Կոմիտեի փոխնախագահը պատասխանեց, որ այդ դեպքում պատասխանատվությունն ընկնում է սեփականատիրոջ վրա:

Մեր մյուս հարցն այն էր, թե այն դեպքում, երբ հատակագիծը տրամադրել է համայնքապետարանը, եւ նրա մեջ ընդգրկվել է նաեւ հարեւանի հողամասի մի հատված, ինչպե՞ս է գույքը գրանցվելու կադաստրում: Ըստ Աշոտ Մուսայանի պատասխանի՝ կոմիտեն ունի կադաստրային քարտեզներ, որտեղ նշված են կոորդինատային տվյալները: Եթե ներկայացված հատակագիծը չհամապատասխանի այդ տվյալներին, կադաստրից հատակագիծը հետ կուղարկեն համայնքապետարան:

Չափագրումը մասնավորին տալու առնչության տրված հարցին պատասխանելով էլ կոմիտեի փոխնախագահն ասաց, որ դրանք կլինեն իրավաբանական անձինք, որոնց որակավորումը կկատարվի կադաստրում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Թբիլիսիում լրագրողներին արգելվել է ներկա լինել «Աղետ» ֆիլմի ցուցադրմանը

Օտարերկրացի եւ տեղացի լրագրողներին արգելվել է Թբիլիսիի քաղխորհրդի շենքում կազմակերպված Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառմանը ներկա լինել, դա կատարվել է Թբիլիսի քաղաքային խորհրդի աշխատակազմի ղեկավար Մարինա Դաթուկաշվիլու հրահանգով: Այս մասին հայտնում է Թբիլիսիի հայերի միության հաղորդագրությունը: Այդ միջոցառման ժամանակ ցուցադրվել է ամերիկյան եւ եվրոպական արխիվների նյութերով ստեղծված «Աղետ» վավերագրական ֆիլմը, որի հեղինակն է գերմանացի ռեժիսոր Էրիկ Ֆրիդլերը, որի մասին «**Ազգ**»-ը ունեցել էր մի քանի հրապարակումներ:

# Երեւանի կենդանաբանական այգին՝ հիմնավոր բարեփոխումների շեմին

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ավանդաբար մայիսի 1-ը Երեւանի կենդանաբանական այգու տարեշրջանի բացման օրն է եւ այս անգամ, կարծում ենք՝ էապես տարբերվող նախորդներից: Բացի կենդանիների դիտավայր լինելուց, այգում տոնականորեն տրամադրող մթնոլորտ է ստեղծվելու հենց մուտքի մոտից, այստեղ այցելուին կդիմավորեն հայտնի հեքիաթների հերոսներ, ողջ տարածքում շրջիկ-տիկնիկային թատրոն կգործի, նաեւ՝ փողային նվագախումբ, կլինեն նկարչական եւ խաղային տաղավարներ:

Այս տարվա ապրիլի 8-ից Կենդանաբանական այգու տնօրեն է նշանակվել **Ռուբեն Խաչատրյանը**, որ 10 տարի արդեն բնապահպանական գործունեություն է ծավալում՝ ղեկավարելով Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը. նա իրենց ծրագրերի հաջողությունը հրավացիորեն հանրային գիտակցության փոփոխության հետ է կապում:

Տես էջ 2




# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի աշխատավորներ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան շնորհավորում է ձեզ Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Միջազգայնորեն նշվող այս տոնը կոչված է մեծարելու աշխատանքն ու աշխատավոր մարդուն, նպաստելու աշխատավորների իրավունքների պաշտպանությանը:

Արհմիությունները լինելով աշխատավորների աշխատանքային ու դրա հետ կապված այլ շահերի պաշտպանը, քաջ գիտակցում են, որ ներկա սոցիալական բազում խնդիրների լուծումները պետք է խարսխվեն սոցիալական գործընկերության, կոլեկտիվ բանակցությունների, ինչպես նաեւ կոլեկտիվ պայմանագրերի հենքի վրա: Հենց այդ գիտակցումով էլ արհմիությունների կոնֆեդերացիան հրատապ ձեւով արձագանքում է աշխատավոր մարդու շահերի պաշտպանության հետ կապված յուրաքանչյուր խնդրին՝ առաջնային պլան մղելով աշխատավարձի ինդեքսավորման, նվազագույն աշխատավարձի, կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի խնդիրները:

Արհմիությունների կոնֆեդերացիան հետամուտ է, որպեսզի հանրապետությունում արժանապատիվ աշխատանքի եւ արժանապատիվ վաստակի հնարավորությունները շարունակաբար աճեն:

Փառք ու պատիվ հայ աշխատավորին, աշխատավորական կոլեկտիվներին, ովքեր ցանկացած դժվարին պայմաններում միշտ էլ հաջողությամբ շարունակել են արարելու, հայրենիքը շենացնելու իրենց նվիրական գործը:

Մեկ անգամ եւս շնորհավորելով մայիսմեկյան տոնի առթիվ՝ մաղթում ենք ձեզ ստեղծագործ ու խաղաղ աշխատանք՝ հանուն ձեր ընտանիքների բարեկեցության եւ մեր երկրի բարգավաճման:

**Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիայի նախագահություն**

# «Պետք է խախտվի Ադրբեջանի գերիշխանությունը օդային սեփական տարածքում»

## *Թուրք լրագրողի վկայությամբ՝ Թուրքիայի վաղուցվա վերաբերմունքն է Ստեփանակերտի օդանավակայանի բացման հարցում*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մարտի 16-ին Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի վարչության տնօրեն Արիֆ Մամեդով կոչված ստահակը, ինչպես հաջորդ օրվա համարում նշել է «**Ազգը**», նախ ասել էր, որ իրենք Ստեփանակերտի օդանավակայանի շինարարությունը կասեցնելու քայլեր են ձեռնարկում, ապա եւ մոռանալով արցախահայությանը բնաջնջելու համար Լեռնային Ղարաբաղ ներխուժելու, իսկ պարտությունից հետո նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից զինադադար մուրալու ադրբեջանական ստորաքարշության մասին, լկստվել է. «Մենք հայտարարել ենք, որ Ղարաբաղի մեր օդային տարածքը փակ է: «Ավիացիայի մասին» օրենքի համաձայն՝ նախատեսվում է այդ տարածքում վայրէջք կատարող ինքնաթիռների ֆիզիկական ոչնչացում: Պաշտոնական Բաքուն իրավասու է ոչնչացնել Ստեփանակերտի օդանավակայանում վայրէջք կատարող ինքնաթիռները»:

Ադրբեջանցի հրոսակին պատասխանել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության վարչության պետ Դավիթ Բաբայանը, ասելով. «Մենք վճռական ենք Ստեփանակերտի օդանավակայանը գործարկելու հարցում եւ ոչինչ չի խանգարի դա իրականացնել: Կօգտագործենք Արցախի օդային տարածքը՝ անկախ դրանից, դա դուր է գալիս Ադրբեջանին, թե ոչ: Եթե ադրբեջանական կողմը փորձի իրականացնել ասածը, ապա դա անկանխատեսելի հետեւանքներ կունենա հենց Ադրբեջանի համար»:

Ըստ ժողովրդական առածի՝ հաչան շունը չի կծում: Խնդիրը, սակայն, շան հաչոցը չէ: Խնդիր չէ նաեւ Թուրքիայի վերաբերմունքը, որովհետեւ նա մինչեւ 1992 թիվը Ղարաբաղ էր գործուղել 3000 «զգոն» թուրքերի, իսկ 1993-ին 30 միլիոն դոլարի վարկ էր տրամադրել զենք գնելու համար, բայց ապարդյուն:

Տես էջ 3

# Սփյուռքի հետ աշխատանքի ծրագրերը ընթացքի մեջ



Երեկ ՀՀ սփյուռքի նախարարին առընթեր ատյանի նիստի օրակարգում ընդգրկվել էին երեք հիմնական հարցեր: Սփյուռքի երիտասարդ առաջնորդների դպրոցի ծրագրի մասին մանրամասներ ներկայացրեց փոխնախարար **Ստեփան Պետրոսյանը** եւ նշեց, որ սփյուռքի շատ համայնքներում նկատվում է առաջնորդների միջին տարիքի աճ: Նա ասաց, որ արդեն հրատապ խնդիր է սփյուռքահայ երիտասարդության հետ համակարգված աշխատանքի կազմակերպումը: Նախատեսվում է տարին մեկ անգամ 14 օրով երիտասարդ առաջնորդների դպրոցի հավակնորդների հյուրընկալել մայր հայրենիքում: Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը** առաջարկել է այդ ծրագրի համահեղինակը լինել, եւ մոտ 100 երիտասարդներ կընդգրկվեն օգոստոսի վերջին անդրանիկ դպրոցի ծրագրին:

Հաջորդը՝ «Հայկական խորհրդանիշների եւ գրքերի առաքման ծրագրի ընթացքի մասին» հարցն էր, որը ներկայացրեց նախարարության աշխատակազմի ղեկավար **Ֆիրդուս Զաքարյանը**: Նա տեղեկացրեց, որ եթե 2008 թ. ՀՀ ԿԳՆ կողմից պատվիրվել եւ ձեռք են բերվել 98 անուն 47.887 կտոր դասագիրք, ուսումնական օժանդակ նյութեր, խտասալիկներ, սակայն սփյուռքին հատկացվել է 25.078 կտոր: 2009-ին պատվիրվել եւ ձեռք է բերվել 113 անուն 57.078 կտոր գրականություն եւ սփյուռքին տրամադրվել է 74.419 կտոր: 2010-ին 138 անուն 38.460 կտոր գրականություն, եւ սփյուռքին տրամադրվել են շուրջ 54.000 կտոր դասագրքեր, ուսումնաօժանդակ նյութեր, խտասալիկներ: Սակայն հատկացված գրականությունն ու օժանդակ նյութերը կազմում են պահանջարկի կեսը:

Օրակարգի երրորդ հարցի շուրջ մանրամասներ ներկայացրեց համահայկական ծրագրերի վարչության պետ **Ատոմ Մխիթարյանը**: Նա թվարկեց «Արի տուն», «Մեկ ազգ, մեծ մշակույթ» փառատոնի, «Մեր մեծերը», «Մայրենիի տարի» սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման համահայկական կրթական խորհրդաժողովը, մեկօրյա դպրոցների ցանցի ընդլայնման եւ «Քույր դպրոցներ» ծրագրերը, որոնք շարունակական ընթացքի մեջ են: Նախարարը հանձնարարականներ տվեց երիտասարդ խորհրդարանականներին երիտասարդական կազմակերպությունների հետ ընդլայնելու համագործակցությունը: Հաջորդ հանձնարարականը կապված էր արեւմտահայերենի միասնական դասագրքերի ստեղծմանը:

Առաջիկայում նախատեսվում է Իտալիայում անցկացնել հայկական օրեր, որի հիմնական թեման նվիրված է լինելու Ցեղասպանությանը: Առաջիկայում նախարարը կմեկնի Ժնեւ, այնուհետեւ Թուրքիա՝ մասնակցելու 1000 կին լիդերների հավաքին: Մայիսի վերջին նախատեսվում է «Սփյուռքի հեռանկարները գլոբալացման աշխարհում» միջազգային համաժողովը, որին կմասնակցեն 13 երկրների պատվիրակներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հովիկ Աբրահամյանը խնդրում է ներում շնորհել Սասուն Միքայելյանին

**Հայաստանի Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ երեկ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը նամակով դիմել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին:**

**«Մեծարգո պարոն նախագահ, միանալով խորհրդարանական կոալիցիոն քաղաքական ուժերի առաջարկին եւ մտահոգ լինելով մեր նախկին գործընկեր Սասուն Միքայելյանի առողջական վիճակով, խնդրում եմ Ձեզ՝ քննարկել նրան ներում շնորհելու հնարավորությունը»:**

**Ի դեպ՝ Հ. Աբրահամյանը Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկի հրավերով մայիսի 3-ին կմասնակցի Բրյուսելում կայանալիք «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի հիմնադիր նիստին:**

Մ. Խ.

# Երեւանի կենդանաբանական այգին...

*1-ին էջից*

«Ես գալիս եմ Վայրի բնության պահպանման հիմնադրամից, մենք կենդանիներին հետեւում ենք վայրի բնության մեջ, նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծում: Գալով Կենդանաբանական այգի՝ տեսնում եմ նեղ վանդակներ, բանտախցեր, որտեղ կենդանիներ են փակված, չունեն շարժվելու տեղ եւ առողջ ապրելու նվազագույն պայմաններ», - ասում է Ռուբեն Խաչատրյանը երեկվա ասուլիսում, որին ներկա էր նաեւ Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու տնօրեն **Հայկ Բալյանը**: Նա Երեւանում է մեր կենդանաբանական այգու հետ պաշտոնական համագործակցություն հաստատելու նպատակով, ինչն արդեն գործնականում ընթանում է: Օրեր առաջ Երեւանում էին Ամստերդամի կենդանաբանական այգու 2 մասնագետ-անասնաբույժներ, որոնք 3 օր քննել են կենդանիներին եւ անհրաժեշտ օգնություն ցույց տվել:

Հայկ Բալյանը «Արտիսի» կողմից այգուն նվիրել է 5 000 եվրո արժողությամբ դեղորայք: Անցնող 2-3 շաբաթների ընթացքում Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն այգու բարեփոխումների համար հատկացրել է 10 մլն դրամ, որից մաս է հանվել ամենատարրական եւ անհրաժեշտ աշխատանքային գործիքներ ձեռք բերելու համար՝ սկսած ռետինե կոշիկներից, անգամ ուրագից եւ այլ իրերից: Այգու ընդհանուր բյուջեն տարեկան կտրվածքով կազմում է 200 մլն դրամ՝ քաղաքապետարանի կողմից հաստատված: Այդ գումարի մոտ 120 000-ը ծախսվում է կենդանիների սննդի վրա: Այս ընթացքում 5-20.000 ական դրամով բարձրացել են աշխատավարձերը:

Բարեփոխումների ծրագիրը բազմաբնույթ է, ծավալուն, աշխատատար եւ ժամանակատար: Ռուբեն Խաչատրյանը կարծում է, որ առաջին 5 տարիների ընթացքում կարելի է ապահովել այնպիսի մակարդակ, որը հնարավորություն կտա ընդգրկվել «Եվրոպական կենդանաբանական այգիների» ասոցիացիայի կազմում: Իսկ սա կապված է անհրաժեշտ փոփոխությունների հետ՝ կենդանիների պահպանման որակի, նրանց խնամքի, տեղի, հիգիենայի, կերակրման եւ այլն: Անդրադարձ եղավ նաեւ Գյումրիի եւ մասնավոր այլ կենդանաբանական այգիներին, որտեղ կենդանիների վիճակն առանձնապես տխուր է, բանտախցերի պես նեղ վանդակներում նրանք տառապում են. «Պետք է թույլ տալ բացել նման այգիներ եւ դարձնել դա բիզնես»:

Երեւանի կենդանաբանական այգին բավականին հարուստ է, սակայն տեսակները ներկայացնելու եւ նրանց բազմացումը կանոնակարգելու լուրջ խնդիրներ կան: Այլ բան է կենդանիներ բազմացնել վաճառքի եւ բոլորովին այլ՝ տեսակը վերականգնելու համար՝ դրանով իսկ վայրի բնությանն օգտակար լինելով : Հայկական մուֆլոնն, օրինակ, էնդեմիկ տեսակ է, հազվագյուտ եւ վտանգված է: Նրա համար ազատավանդակ ստեղծելը դժվար չէ, ոչ էլ ծախսատար: Մինչդեռ փղի համար մեր բնակլիմայական պայմանները բարենպաստ չեն, ձմռանը նա ստիպված է նեղ պատերի մեջ խցկված ապրել:

Հայտնի է, որ մեր կենդանաբանական այգում կենդանիներն անբավարար պայմաններում են, խեղճացած, կորցրած բնական վիճակները, թերսնված, եւ շատ այլ անմխիթար բաներ կան, որոնց մասին պատմում են տեսագրված կադրերը եւ որոնց հիման վրա շուտով ֆիլմ է նկարահանվելու:

Հայկ Բալյանն ասում էր, որ 2002-ին ինքը եղել է Երեւանում եւ փորձել համագործակցության եզրեր փնտրել կենդանաբանական այգու հետ: Համակարգիչներ են ուղարկվել, որոնք անհասկանալիորեն անհետացել են: Ըստ նրա, նախկինում չեն եղել ծրագրեր եւ գաղափարներ: Անցման շրջանում, ինչպես ամենուրեք է, ասում է նա, դժվարություններ լինում են, բայց՝ հաղթահարելի են:

Կենդանաբանական այգու 35 հա տարածքից օգտագործվում է 7 հա-ը, մնացածը վայրի բնություն է, ձորեր, անտառներ՝ բնակեցված զանազան կենդանատեսակներով (բվեր, արծիվներ, ագռավներ, կատուներ): Տարածքի մի մասը զբաղեցված է զանազան շինություններով (ամառանոցներ, այգիներ), որոնց օրինական լինելը առայժմ նորանշանակ ղեկավարությանը հայտնի չէ:

Երեւանի կենդանաբանական այգին արդեն ունի իր խորհրդանշանը (լոգոտիպը)՝ Հայկական մուֆլոնի, հովազի եւ արծվի պատկերով:

Ծրագրերի բարեհաջող ընթացքը կախված է աշխատանքային ճիշտ ռազմավարությունից, գաղափարական մոտեցումներից եւ հուսալի համագործակցությունից, որոնց պայմաններում է հնարավոր հասնել վերջնական նպատակի՝ վերածվել «Բնապահպանական կրթության եւ կենսաբազմազանության պահպանման ազգային կենտրոնի»:

**ԲՈՒՀԱԿԱՆ**

# Հովհաննես Թոքմաջյանը՝ ԵՃՊՀ-ի ռեկտոր. Բժշկական համալսարանի ռեկտոր կընտրեն այսօր

**Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի նախագահությամբ ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի կառավարման խորհուրդը սահմանված ընթացակարգով՝ փակ գաղտնի քվեարկությամբ, միաձայն բուհի ռեկտոր ընտրեց տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Թոքմաջյանին: Թոքմաջյանն ավարտել է Կիեւի քաղաքացիական ավիացիայի ինստիտուտը, թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել Թբիլիսիում: 1988-ին ստացել է դոցենտի գիտական աստիճան, 1994-ին՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2006-ից Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի ռեկտորն է: Թոքմաջյանը 200 գիտական աշխատանքի, այդ թվում 3 մենագրության հեղինակ է: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է 5 դոկտորական եւ 10 թեկնածուական ատենախոսություն:**

**Բավարար գնահատելով 2006-2010թթ. համալսարանի գործունեությունը, Կարեն Կարապետյանն ընդգծեց Ստեփանակերտի եւ Մարտունու ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի եւ Ստեփանակերտի օդանավակայանի նախագծային աշխատանքների իրականացումը:**

**«Ձեռքբերումները, որոնք արձանագրվել են վերջին 5 տարվա ընթացքում, համալսարանի պրոֆեսորադասախոսական եւ ամբողջ աշխատակազմի աջակցության եւ աշխատանքի արդյունքն են», ասաց վերընտրված ռեկտորը: Ներկայացնելով առաջիկա 5 տարվա ռազմավարական ծրագիրը՝ Թոքմաջյանն առանձնացրեց 3 գերակա ուղղություն. որակյալ ուսուցման ապահովման շարունակություն, գիտահետազոտական աշխատանքների ներդրում արտադրությունում, միջազգային հարաբերությունների ընդլայնում եւ ամրապնդում:**

**ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հրամանով՝ իր դիմումի համաձայն, ԵՊՀ-ի ռեկտոր Արամ Սիմոնյանը ազատվել է ռեկտորի պաշտոնից եւ նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար: Սիմոնյանի պաշտոնավարման ժամկետը լրանում է մայիսի 29-ին: ԵՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթը կհայտարարվի սահմանված կարգով:**

**Այսօր ժամը 11-ին տեղի կունենա Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի խորհրդի նիստը՝ Արմեն Աշոտյանի նախագահությամբ: Օրակարգում համալսարանի ռեկտորի ընտրության հարցն է:**

**Հ. Հ.**

# Նոր խորհրդարանում իշխանություն-ընդդիմություն հարաբերակցությունը՝ 70:30

*1-ին էջից*

**Ընդդիմության մեջ մանդատները բաժանվելու են մի քիչ ավել-պակաս հետեւյալ սխեմայով. 10 տեղ ՀԱԿ-ին, 5-7 տեղ ՀՅԴ-ին, պատկերացումներ կան երկու ավանդական կուսակցություն եւս խորհրդարանում տեսնելու: Կարապետիչին, Արամ Կարապետյանին էլ ինչ- որ ձեւով տանելու են խորհրդարան: «Ժառանգությանը» տրամադրություն կա խորհրդարան չթողնելու, սակայն դա միանշանակ չէ, քանի որ «Ժառանգության» հովանավոր շրջանակների ջանքերը կարող են արդյունք տալ, եւ եթե անգամ նրանց ի վերջո մի քանի տեղ տան՝ դա լինելու է Դաշնակցության, ՀԱԿ-ի եւ ընդդիմության 30 տոկոսի հաշվին՝ «նեղ արեք-տեղ արեք» սկզբունքով:**

**Ասում ենք՝ սրանք մե՛ր պատկերացումները չեն, այլ տարբեր աղբյուրների փոխանցած՝ վերեւների պատկերացումները ապագա խորհրդարանի վերաբերյալ: Հետաքրքրական է, որ հենց այս օրերին սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանի արտաբերած տարբերակը եւս շատ չի տարբերվում վերը գծվածից՝ միայն ՀԱԿ-ին ավելին տալու վարկածով. ՀԱԿ-ի վարկանիշն, ըստ նրա, 20 տոկոսի սահմաններում է (այն մինչեւ 10 տոկոս կարող է նվազել իշխանության հետ երկխոսելու արդյունքում), ՀՅԴ-ն 5-7 տոկոս ընտրազանգված ունի, Րաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշն 8 տոկոսից չի իջել, տիրապետող դիրք ունի ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն պայքարում է երկրորդ տեղի համար:**

**Այս առիթով վերադառնալով ԲՀԿ-ին՝ նկատենք, որ այս երկու օր է ԲՀԿ-ի հայտնի ներկայացուցիչները՝ Նաիրա Զոհրաբյանը, Արամ Սաֆարյանը, Վարդան Բոստանջյանը, պնդում են, թե ԲՀԿ-ն խորհրդարանական ընտրություններին առանձին ցուցակով է մասնակցելու, ի հեճուկս տարբեր սցենարներ գրողների (ինչն ապացուցում է, որ միայն խոսակցություններ չեն մեր լսածները, այլ իրական հիմք ունեն), որ կուսակցության քաղխորհրդում եւ պատգամավորական խմբակցությունում գերիշխող տրամադրությունն այդ է, չնայած այդ մասին մտածելը դեռ վաղ են նկատում: Սա, իհարկե, պատահականություն չէ եւ կոալիցիայի միասնական ցուցակի գաղափարը այժմվանից հակադրվելու հեռանկարին է վերաբերում, քանի որ որքան ընդդիմությունն է կատաղի պայքարելու խորհրդարան անցնելիս ավելին ունենալու համար, հավանաբար դրանից մի քանի անգամ կոալիցիոն կուսակցություններն իրար հետ կկռվեն, ու սա թերեւս կլինի ավելի շատ խորհրդարանական ընտրությունների ինտրիգը՝ ՀԱԿ-ի խորհրդարան անցնելու չափ:**

**Իսկ ՀԱԿ-ի թեման առայժմ թողենք, քանի որ առանց մեզ էլ ՀԱԿ ղեկավարությունն այժմ արդեն կարգին պրոբլեմներ ունի իր ընտրազանգվածի հետ. հենց ապրիլի 28-ի հանրահավաքում ՀԱԿ-առաջնորդի ելույթից հիասթափվածների պակաս չկար, անգամ այդ ելույթի տոնայնությանը հակադրվածներից ոմանք ուզեցել են հենց նույն օրը նստացույց անել, ինչը ՀԱԿ որոշ ղեկավարների ուժերով չի կայացել: Մյուս հանրահավաքին հիասթափվածներից շատերը կարող են չգալ, եթե միայն բանտերում մնացած ՀԱԿ-ականներին ազատ չարձակեն, որոնք գուցե դեռ որոշ ժամանակ թարմ արյուն կներարկեն հանրահավաքային հարթակին: Բայց որ «կիսաբաց դռան» եւ «թավշյա հեղափոխություն» բառերի արտաբերման երեւույթով ՀԱԿ վարկանիշը արմատական տրամադրված զանգվածի մեջ արդեն նվազում է՝ գուցե հենց իշխանության սխեմայով էր նախատեսված ընդդիմության ուղղությամբ քայլ անելիս:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Ոտնահարվում են Հայ առաքելական եկեղեցու եւ քրիստոնյաների իրավունքները հատկապես Թուրքիայում

Կրոնական ազատությունների ԱՄՆ-ի հանձնաժողովը ներկայացրել է տարեկան զեկույց, որտեղ ընդգրկված են այն երկրները, որոնք հատուկ մտահոգություն են առաջացնում եւ անհանդուրժողականություն են ցուցաբերում ազգային փոքրամասնությունների կրոնական պատկանելությանը:

Զեկույցում ընդգրկված է 14 պետություն. ցանկը գլխավորում է Եգիպտոսը, որտեղ ղպտի քրիստոնյաների եւ կրոնական այլ փոքրամասնությունների դեմ գործադրվող բռնությունների դեպքերն աճել են՝ հիմնականում նախկին կառավարության եւ ներկա իշխանությունների թողտվության պատճառով: Ցանկում ընդգրկված են նաեւ Իրաքը, Իրանը, Սաուդյան Արաբիան, Բիրման, Չինաստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը եւ այլ երկրներ:

Հանձնաժողովը դիմել է ԱՄՆ-ի արտգործնախարարությանը՝ ցանկում ընդգրկված 14 պետությունները ճանաչել որպես «հատուկ մտահոգություն առաջացնող երկրներ»: Սա հետագայում կարող է հիմք դառնալ պետությունների դեմ պատժամիջոցների կիրառման համար:

Աշխարհում կրոնական ազատությունների ԱՄՆ-ի հանձնաժողովն իր զեկույցում «հատուկ ուշադրություն պահանջող երկրների» ցանկում ընդգրկել է Ռուսաստանը եւ Թուրքիան:

Զեկույցում լայն անդրադարձ կա Հայ առաքելական եկեղեցու խնդրին եւ հայ քրիստոնյաների դեմ իրականացվող բազմաթիվ բռնությունների եւ իրավունքների սահմանափակման դեպքերին:

Համաձայն զեկույցի՝ Թուրքիան, «աշխարհիկ պետականությունը պահպանելու նպատակով» վերահսկում է կրոնն ու սահմանափակումներ մտցնում բոլոր կրոնական կազմակերպությունների, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: «Այս երկրի օրենքները կրոնական փոքրամասնություններին թույլ չեն տալիս որպես իրավաբանական անձ գրանցվել՝ որպես այդպիսին հանդես գալու համար, իսկ Թուրքիայում հայոց պատրիարքը զրկված է իրավաբանական անձի անունից հանդես գալու հնարավորությունից»:

Թուրքիայում տարբեր պատրվակներով բռնագրավվել է կրոնական փոքրամասնություններին՝ հայերին, հույներին, հրեաներին եւ կաթոլիկներին պատկանող գույքը՝ թույլ չտալով պատշաճ վիճակում պահպանել իրենց կրոնական շինությունները: «Թուրքիայում Հայ առաքելական եկեղեցին, որպես կրոնական փոքրամասնություն ներկայացնող ամենամեծ կազմակերպություն, չունի իր հոգեւոր վարժարանը: Իսկ Հայ առաքելական եկեղեցու պատրիարքի կողմից Թուրքիայի պետական համալսարաններից մեկում աստվածաբանության ֆակուլտետ հիմնելու դիմումը դեռեւս դրական պատասխան չի ստացել»:

Զեկույցում ասված է, որ Թուրքիայում տարածված է եւ ահռելի չափերի է հասնում կրոնական ատելությունը: «Դրա դրսեւորումներից են Թուրքիայում Հայ առաքելական եկեղեցու պատրիարքին էլեկտրոնային փոստով օրական 300 սպառնալիք ուղարկելն ու քրիստոնյա հոգեւորականների եւ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների վրա կատարված հարձակումները»:

Զեկույցն անդրադառնում է նաեւ Իրանում հետզհետե թափ առնող, նույնիսկ ճանաչված կրոնական փոքրամասնությունների, այդ թվում նաեւ հայերի նկատմամբ անհանդուրժողականությանը:

Անդրադառնալով Իրաքում կրոնական փոքրամասնությունների խնդրին՝ մասնագետները նշում են, որ նրանք հիմնականում կենտրոնացած են Նինվե նահանգում: Այստեղ քրդական եւ արաբական քաղաքական կուսակցությունների միջեւ չեն դադարում վեճերը վերահսկողություն հաստատելու շուրջը:

«Դրանց զոհ են դառնում քրիստոնեական փոքրամասնության, մասնավորապես՝ Հայ առաքելական եկեղեցու, ինչպես եւ կաթոլիկ հայերը, որոնց թիվն Իրաքում հետզհետե նվազում է բռնությունների պատճառով»:

Թուրքմենստանում էլ առկա կրոնական փոքրամասնություններին թույլ չեն տալիս պաշտոնապես գրանցվել, ինչի պատճառով նրանք զրկված են պաշտամունքի եւ ծիսակատարություններ կատարելու իրավունքից: Բացի դրանից, երկրի իշխանություններն աշխատում են մուտքի արտոնագրեր չտրամադրել կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ինչի պատճառով այս երկիր Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ վերջին անգամ այցելել է 1999թ.:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Պետք է խափանել Ադրբեջանի գերիշխանությունը օդային սեփական տարածքում»

*1-ին էջից*

«Զգոն» թուրքերից շատերը, որոնք եղել են Ազգայնական շարժում կուսակցության անդամներ, Լեռնային Ղարաբաղում կնքեցին իրենց անփառունակ մահկանացուն: Չնայած Թուրքիայի տրամադրած զենքին, զինամթերքին եւ զենք գնելու վարկին, արցախահայությունը պատերազմում հաղթանակի հասավ Ադրբեջանի նկատմամբ, ավելին՝ Արցախն ազատեց ադրբեջանցի հրոսակի գերիշխանությունից եւ ազատագրված տարածքը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Պարզապես Թուրքիան, պաշտպանելով Ստեփանակերտի օդանավակայանում ինքնաթիռները ոչնչացնելու առումով ադրբեջանցի հրոսակին, ամբողջացնում է հայերի եւ Հայաստանի նկատմամբ իր որդեգրած դիրքորոշման մասին մեր պատկերացումները: Մանավանդ որ ապրիլի 24-ից հետո թուրքական մամուլում վերստին շրջանառության մեջ են դրվել Հայաստանի հետ ելման կետ վերադարձած երկխոսությունը վերսկսելու նկրտումները:

Ինքնաթիռ ոչնչացնելու հարցում կրտսեր եղբորը պաշտպանելու Թուրքիայի վերաբերմունքի առումով հասկանշական է Ֆիքրեթ Էրթանի «Մայիսի 8-ին սպասելիս...» վերնագրով «Զամանի» ապրիլի 28-ի համարում հրապարակված հոդվածը: Ահա թե ինչ է գրել.

«Մայիսի 8-ը կարեւոր ամսաթիվ է լինելու մեր տարածաշրջանի համար: Այդ օրը, նախապես արված հայտարարության համաձայն, պաշտոնապես կբացվի Ղարաբաղի մայրաքաղաք Խանքենդիի (հայերը Ստեփանակերտ են ասում) օդանավակայանը: Դեռեւս մարտի 31-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ առաջին ինքնաթիռով ինքը կուղեւորվի այնտեղ: Ադրբեջանն իհարկե դրան բուռն հակազդեցություն էր ցուցաբերել, բացահայտ հայտարարելով, որ ոչ մի դեպքում թույլ չի տալու Ղարաբաղը շրջապատող ադրբեջանական օդային տարածքով որեւէ ինքնաթիռի թռիչքը, այլապես ինքնաթիռը կխփի:

Այս ամսվա սկզբին Ադրբեջանը մեկ այլ հայտարարություն արեց, նշելով, որ քաղաքացիական ավիացիայի թռիչքների դեմ Բաքվի հակաքայլերի մասին խոսք լինել չի կարող, դրանք բացառվում են, սակայն, օկուպացված ադրբեջանական հողերի օդային տարածքում նախատեսվող թռիչքներն ապօրինի են, հետեւաբար՝ վտանգավոր են լինելու:

Խանքենդիի օդանավակայանի հարցը, որն առաջիկա ամսում իր կնիքն է դնելու քաղաքական օրակարգի վրա, հակամարտության պատճառով տարիներ շարունակ փակ է մնում: Ավելի ճիշտ, փակվեց 1992-ին: Ղարաբաղի շրջանը օկուպացիայի տակ պահող հայկական վարչակարգը ձեռնամուխ է եղել օդանավակայանի վերանորոգման աշխատանքներին: Ըստ երեւույթին այդ աշխատանքներն ավարտվել են, օդանավակայանը պատրաստ է ընդունել քաղավիացիայի ինքնաթիռները:

Եթե օդանավակայանը բացվի, ապա ինքնաթիռները, ինչպես արդեն նշել ենք, պարտադիր անցնելու են Ադրբեջանի օդային տարածքով: Այս հանգամանքը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, Ադրբեջանին տալիս է թռիչքները կանխարգելելու եւ կասեցնելու իրավունքը: Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը դեռեւս չի արձագանքել կողմերի հայտարարություններին: Այդ իսկ պատճառով սպասում ենք արձագանքին:

Խանքենդիի օդանավակայանի բացման հարցում Թուրքիայի որդեգրած դիրքորոշումը հայտնի է: Նա Ադրբեջանին լիարժեք աջակցելիս վաղուց ի վեր ընդգծում է յուրաքանչյուր թռիչք միջազգային նորմերին համապատասխան կատարելու եւ ամեն դեպքում օդային սեփական տարածքում Ադրբեջանի գերիշխանության խախտումները չհանդուրժելու անհրաժեշտությունը: Այդ առումով Թուրքիայի վերաբերմունքը որեւէ երկմտանքի տեղիք չի տալիս:

Բացի դրանից՝ ղարաբաղյան հակամարտության կարեւոր դերակատարներից Ռուսաստանը օդանավակայանի առնչությամբ առ այսօր որեւէ հայտարարություն չի արել: Սակայն չի կարելի ասել, որ Ռուսաստանն անտեղյակ է, քանի որ Հայաստանը չէր կարող նախապես չիրազեկել Մոսկվային: Չի բացառվում, որ Մոսկվան օդանավակայանի բացման նախօրյակին դիվանագիտական բազմաբնույթ շփումներ է ծավալում:

Այս ամենը ներկա պահին իրատեսական դիտարկումներ են, սակայն միանգամայն հնարավոր է, որ օդանավակայանի բացումը նախքան մայիսի 8-ը հետաձգվի կամ էլ չեղյալ հայտարարվի: Թեեւ այդ դեպքում խնդիրը կվերանա, բայց ժամանակավորապես, հայկական կողմը հետագայում այդ հարցը նորից կբարձրացնի, երբ ցանկանա: Սպասենք մայիսի 8-ին...»:

ՇՏԵՖԱՆ ՖՅՈՒԼԵՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

# Եվրոմիությունը կարեւորում է «հակամարտ կողմերի հասարակությունների հետ երկխոսությունը»

**Եվրոպական միությունը շարունակում է սատարել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքին՝ պաշտպանելով ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության ու ազգերի ինքնորոշման սկզբունքները: Այդ մասին երեկ Հայաստանի արտգործնախարարությունում կազմակերպված ասուլիսում հայտարարել է Եվրոպական միության ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն: «Նախօրեի միջադեպի լույսի ներքո (նկատի ունի ադրբեջանական կողմից արձակված կրակից հայ զինծառայողի մահը) արտահայտում եմ Եվրոպական միության լուրջ մտահոգությունը առ այն, որ Լեռնային Ղարաբաղում շարունակվում են միջադեպերը», նշել է եվրոպացի դիվանագետը: Ֆյուլեն ասել է, որ Հայաստանի արտգործնախարարն իրեն տեղեկացրել է բանակցային գործընթացի մասին, ասել, որ Ադրբեջանի ղեկավարության հետ ղարաբաղյան հիմնախնդրի բանակցությունների շրջանակներում հանդիպումներ են կայանում: «Բանակցություններում որոշակի առաջընթաց կա, նախարարն էլ ասաց, որ մի շարք հանդիպումներ են եղել: Մեր գնահատականն այն է, որ այս հանդիպումների միջոցով կողմերը փաստացի առաջ են շարժվում, եւ կարեւոր է դա արտացոլել հնչեցվող հռետորաբանության մեջ», ընդգծել է Ֆյուլեն: Այս տարածաշրջանում երկարատեւ հակամարտությունները, նրա խոսքով, անհրաժեշտ է լուծել խաղաղ ճանապարհով, միջազգային սկզբունքների հիման վրա: «Կարծում եմ, պետք է բացառապես հասկանալի դարձնել կողմերին, որ զինված ուղին տարբերակ չէ: Կարծում եմ, որ կողմերի համար կարեւոր է նաեւ ճշգրտել իրենց հռետորաբանությունը: Զինված ուժի հեռանկարի մասին խոսելը օգտակար չէ», հայտարարեց Շտեֆան Ֆյուլեն:**

**Իսկ «Մեդիամաքս»-ին տված հարցազրույցում եվրոպացի դիվանագետը նշել է, որ ԵՄ-ն կարող է դեր խաղալ ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման գործում՝ օժանդակելով «կողմերին քաղաքականապես եւ տնտեսապես Եվրոպային ավելի մոտիկ դառնալու, դրանով իսկ հակամարտ կողմերի հասարակությունները ավելի թափանցիկ ու բաց դարձնելու գործում». «Արդյունքում կողմերն ավելի լավ կնախապատրաստվեն ԼՂ հակամարտության խաղաղ լուծմանը», նշել է Ֆյուլեն «Մեդիամաքս»-ին: Գործակալության հետ զրույցում դիվանագետն անդրադարձել է նաեւ հայ-թուրքական գործընթացին. «ԵՄ-ն մեկ անգամ չէ, որ ներկայացրել է իր դիրքորոշումը այս հարցում: Մենք շարունակում ենք աջակցել հայ-թուրքական՝ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու գործընթացին: Մենք շարունակում ենք այս հարցը քննարկել երկու կողմերի հետ էլ՝ մեր քաղաքական երկխոսությունների եւ հանդիպումների միջոցով՝ հորդորելով ինչպես Հայաստանին, այնպես էլ Թուրքիային՝ շարունակել պատմական գործընթացը: Ես հույս ունեմ, որ Թուրքիայում ընթանալիք ընտրություններից հետո երկխոսության համար նոր հնարավորություններ կբացվեն: ԵՄ-ը պատրաստ է օժանդակություն ցուցաբերել՝ սահմանային ենթակառուցվածքներին, եթե երկու պետությունների միջեւ սահմանը բացվի», նշել է Ֆյուլեն: Հ. Ա.**

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Շտեֆան Ֆյուլեին



**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը ընդունել է Եվրոմիության ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանի Հանրապետությունում Եվրոմիության պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լյուզենբերգերը:**

**Զրուցակիցները քննարկել են Հայաստան-ԵՄ համագործակցության առկա վիճակը եւ հետագա զարգացման հեռանկարները: Երկուստեք դրական են գնահատվել համագործակցության բարձր մակարդակը եւ հարաբերությունների արագ զարգացումը:**

**Արթուր Բաղդասարյանը անդրադարձել է Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացքին՝ առանձնացնելով մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ ոստիկանական համակարգի բարեփոխումները, ազատության, արդարադատության եւ անվտանգության ոլորտում իրականացվող աշխատանքները: ԱԱԽ քարտուղարը անդրադարձ է կատարել Արեւելյան ներդրումներ ծրագրին՝ ընդգծելով այդ ծրագրի կարեւորությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների ճանապարհին եւ հետագա առավել սերտ փոխգործակցության հնարավորությունները: Արթուր Բաղդասարյանը իր գոհունակությունն է հայտնել Հայաստան-ԵՄ քաղաքական համագործակցության՝ ասոցացման համաձայնագրերի բանակցությունների ընթացքի վերաբերյալ՝ շեշտելով համագործակցության հրապարակայնության կարեւորությունը: Ընդգծվել է Հայաստանում Եվրոմիության տեղեկատվական կենտրոնների հիմնման կարեւորությունը:**

**Շտեֆան Ֆյուլեն բարձր է գնահատել ԱԱԽ-ի շրջանակներում գործող, եվրոպական կառույցների գործունեությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը եվրոինտեգրման ճանապարհին Հայաստանի Հանրապետությունում կենսագործվող բարեփոխումների համատեքստում՝ նշելով, որ քաղաքական համակարգումը կարեւոր հանգամանք է Եվրոպական հարեւանության քաղաքականության ծրագրի իրականացման գործընթացում:**

**Նա իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու վերը նշված ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքին, քանի որ դրանք մի շարք ուղղություններով լիովին համահունչ են Եվրոպական հարեւանության քաղաքականության փիլիսոփայությանը:**

# Հայկական ռադիո

***Տասնամյակներ շարունակ Թուրքիայում ապրող քրդերի համար սեփական ինքնության պահպանումը եւ մայրենի լեզվով խոսելը դժվարին եւ բարդ խնդիր էր: Քրդերենով խոսելու համար բանտարկություն եւ տուգանքներ էին ստանում: Պատմում են, որ քրդաբնակ գյուղերում համընդհանուր լռություն էր տիրում, քանի որ քրդերեն խոսելն արգելված էր: Եվ տարիներ տեւող այս լռությունը ճեղքում էր հայկական ռադիոն իր քրդական հաղորդումով՝ պատմելով այդ ժողովրդի կյանքի ու կենցաղի մասին, հեռարձակելով քրդերեն երգ ու երաժշտություն:***

***Արդեն 50 տարի այդ ռադիոժամում աշխատում եւ վերջին քսան տարիներին ղեկավարում է քուրդ հայտնի մտավորական Քյարամ Չոլոյանը (Քյարամե Սայադը), որի հետ էլ զրուցեցինք ռադիոժամի մասին:***

**- Պարոն Չոլոյան, մի փոքր պատմեք հայկական ռադիոյով հնչող քրդերեն ռադիոժամի ստեղծման մասին:**

- Քրդերեն լեզվով ռադիոժամ հայկական ռադիոյով սկսվեց հեռարձակվել անցյալ դարի 30-ական թվականներին, մինչեւ 38-ը հնչում էին քրդերեն լեզվով 5 րոպե տեւողությամբ նորություններ, սակայն 38-ին դադարեց եւ վերաբացվեց 1955-ին:

**- Քանի՞ րոպե էր տեւում ռադիոժամը եւ քանի՞ անգամ էր հեռարձակվում շաբաթվա ընթացքում:**

- Այն ժամանակ՝ 1955-ին, 15 րոպե, շաբաթը 3 անգամ: Դա մեծ ուրախություն էր պատճառում ժողովրդին, եւ մարդկանց խնդրանքով ռադիոժամը դարձավ ամենօրյա՝ 30 րոպե: 1961-ին ռադիոունկնդիրների եւ Քրդական դեմոկրատական կուսակցության ղեկավար գեներալ Բարզանիի (Մուսթաֆա Բարզանին Իրաքի Քրդստանի ինքնավարության ներկա նախագահ Մասուդ Բարզանիի հայրն էր–հեղ.) խնդրանքով (վերջինս 1958-ին եկավ Հայաստան, հանդիպում ունեցավ ՀԽՍՀ-ի ղեկավարության հետ) քրդերեն հաղորդումների տեւողությունը ավելացավ: Գեներալ Բարզանին խնդրեց նաեւ, որ Երեւանի ռադիոյի քրդական ռադիոժամի ձայնը հնչի նաեւ Քուրդիստանում:

**- Այսինքն մինչեւ Իրաք եւ Թուրքիա:**

- Ինքը շեշտեց Քուրդիստան բառը, քանի որ այն ժամանակ արդեն պայքարում էր քրդական հարցի համար, որ անկախություն կամ ինքնավարություն ձեռք բերի, եւ ասաց. «Լավ կլինի, որ քրդերեն ձայնը լսվի նաեւ Քուրդիստանում», դա 1958 թվականն էր: Բարզանին հետագայում մեկնեց Իրաք, որտեղ սկսվեց անկախական շարժումը:

1961-ին մեր հաղորդումների տեւողությունն ավելացավ եւ դարձավ ժամուկես: Մեկ ժամ ցերեկը եւ 30 րոպե գիշերը: Սա մեծ ուրախություն պատճառեց Իրաքի եւ Թուրքիայի քրդերին: Սակայն այն ժամանակ, ԽՍՀՄ-ի քաղաքականության պատճառով, մեզ թույլ չէին տալիս մեր հաղորդումների ժամանակ հայտարարել, որ մեր հաղորդումները նաեւ արտասահմանի քրդերի համար են: 1962-ին ես հոդված էի գրել «Կոմունիստ» թերթին ռադիոյի օրվա կապակցությամբ, եւ շեշտել, որ մեր ռադիոժամը լսվում է նաեւ արտասահմանում, մենք նամակներ ենք ստանում նաեւ այնտեղից: Իսկ այն ժամանակ «Կոմունիստ» թերթը, որը ռուսերեն էր տպագրվում, կարդում էին Մոսկվայում, մեր կոմիտեի նախագահ Հակոբ Այվազյանին կանչում են ԽՍՀՄ արտգործնախարարություն եւ հայտարարում, թե Ձեզ ով է թույլ տվել շեշտել, որ հաղորդումը հեռարձակվում է նաեւ արտասահմանի քրդերի համար: Ինձ զգուշացրին, որ նման բան չգրեմ այլեւս:

**- Պարոն Չոլոյան, ո՞ր թվականից եք աշխատում հայկական ռադիոյում:**

-Մինչեւ այստեղ գալը թղթակցում էի «Ավանգարդ», «Կոմունիստ», «Սովետական Հայաստան», հետո՝ Թալինի «Կոմունիզմի դրոշով» թերթերին, թղթակցում էի նաեւ ռադիոյում, այդ թվում նաեւ քրդերեն բաժնին: 1960 թվականին ինձ հրավիրեցին ռադիո, սակայն աշխատանքային իմ հրամանը տրվեց 1961-ի ապրիլի 1-ին: Այսինքն այս տարի ապրիլին լրանում է իմ աշխատանքային 50 տարին ռադիոյում: Ներկայումս այդպիսի ստաժով ստեղծագործական բաժիններում այլ աշխատող ռադիոյում չկա:

Երբ ինձ հրավիրեցին, 3-4 աշխատողներ կային, հետագայում բացվեց 12-հոգիանոց բաժին, միայն քրդական բաժինը 3 սենյակ ուներ, եւ քանի որ մեր հաղորդումներին արտասահմանից սկսեցին արձագանքել, մեր ռադիոժամը սկսեց ենթարկվել Մոսկվային: Նույնիսկ 1968-ին քննարկվում էր մեր բաժինը Մոսկվա տեղափոխելու հարցը: Բայց հետագայում դա տեղի չունեցավ:

**- Մեկուկես ժամ տեւողությունը ինչքա՞ն պահպանվեց:**

- Պահպանվեց մինչեւ ԽՍՀՄ-ի փլուզումը՝ 1991-ը, դրանից հետո դարձավ 1 ժամ, հետո՝ 45 րոպե, այնուհետեւ՝ 30 րոպե: Ներկայումս հեռարձակվում է 30 րոպե ամեն օր:

**- Եվ ինչպե՞ս է բաժանվում:**

- 30 րոպեների ընթացքում տրվում են լուրեր, քաղաքական մեկնաբանություններ Հայաստանի կյանքից եւ իրավիճակից, քրդական կյանքից: Արտասահմանցիների խնդրանքով, բացի քաղաքական մեկնաբանություններից, հեռարձակվում է մշակութային օրագիր՝ քրդական մշակույթ: Մենք ամբողջ աշխարհում հեռարձակվող նաեւ մոտ 40 ռադիո-բեմադրություն քրդերեն: Հետո մեր քրդական ֆոնդից այդ երաժշտությունը տարածվեց ամբողջ աշխարհով: Եվ ամենուրեք նշում են, որ դա Երեւանի ռադիոյից է:

**- Նախկինում քրդական ռադիոժամը, կարելի է ասել, մեծ ազդեցություն ուներ, ներկայումս նոր տեխնոլոգիաների՝ ինտերնետի գոյության պայմաններում կա՞ նախկին ազդեցությունը:**

- Լսում են, սակայն ոչ այնքան, ինչքան նախկինում, բայց լուրերը, հատկապես մշակութային, Հայաստանի քրդերի կյանքից, լսում են: Ի դեպ, կարելի է լսել ռադիոժամը նաեւ ինտերնետի միջոցով, որտեղ կա նաեւ գրավոր տեքստ: Ինչքան էլ քրդական հեռուստատեսություն լինի, եթե մեր հաղորդումը մի քիչ ուշանա, իսկույն զանգում են եւ հետաքրքրվում, թե ինչու չի հեռարձակվում եւ այլն: Նախկինում մենք 12 աշխատող ունեինք, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տնտեսական պայմանների պատճառով շատերը թողեցին գնացին, ես որպես կարող ուժ՝ թարգմանիչ եւ խմբագիր, մնացի մենակ, Վլադիկ Զադայան ղեկավար կար, որը կանչեց ինձ եւ ասաց, որ մեր հաղորդումները պետք է փակվեն: Ես պատասխանեցի, որ ամբողջ աշխարհը գիտի

# «Քրդերենի պահպանման համար պարտական ենք մեր մայրերին եւ հայկական ռադիոյին»



առաջին քրդերեն հաղորդումներից ենք, նշում ենք, որ քրդական առաջին թատրոնը, առաջին կինոն քրդերեն լեզվով ստեղծվել եւ հեռարձակվել են Հայաստանից: Քրդերեն դասաժամեր հայկական դպրոցում առաջինը բացվել են Հայաստանում:

**- Իսկ արձագանքները արտասահմանից ինչպիսի՞ն են եղել:**

- Արձագանքներ միշտ էլ եղել են, թե՛ ԽՍՀՄ-ի տարիներին եւ թե՛ հետո, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո արձագանքները շատացան: Մենք հիմա էլ Իրանի, Իրաքի եւ Թուրքիայի քրդերից ստանում ենք նամակներ եւ հեռախոսազանգեր, որոնք շատ դեպքերում ուղիղ եթեր ենք հեռարձակում:

**- Հիմա այդ կապը շարունակվո՞ւմ է ու ի՞նչ ձեւով:**

- Հիմնականում հեռախոսազանգեր են, որոնք լինում են ամեն տեղից, նույնիսկ Եվրոպայից, ժամանակին մենք նաեւ հեռարձակվում էինք դեպի Եվրոպա: Նախկինում երեք ալիքով էինք հեռարձակվում՝ տեղական, դեպի Թուրքիա, Իրաք եւ դեպի Եվրոպա: Հիմա միայն երկու ալիքով ենք հեռարձակվում, սակայն միջին ալիքը այնքան էլ լավ չի աշխատում:

**- Նախկինում արձագանքները մեծ են եղել, բայց հիմա արդեն քրդալեզու հեռուստաընկերություններ, կան, օրինակ, Բելգիայից, Իրաքյան Քուրդիստանից, չե՞ն ազդել ձեր լսարանի վրա:**

- Ես չէի ասի, թե մեր լսարանը փոքրացել է:

**- Ես գիտեմ նաեւ, որ քրդական երգ եւ երաժշտություն, բացի Բաղդադից, առաջին անգամ հայկական ռադիոյով է հեռարձակվել:**

- Այո, Երեւանից է առաջին անգամ քրդերեն երաժշտություն եւ երգ հեռարձակվել: 50-ականներին գյուղերից երաժիշտներ էինք հավաքում, որոնք էլ երգում էին: Հետագայում սկսեցին խմբեր կազմվել, 60-ականներին, ֆիլհարմոնիային կից արդեն քրդական խումբ կար, կային անվանի քուրդ երաժիշտներ, որոնց մենք հեռարձակում էինք, եւ հիմա 2 հազարից ավելի ձայնագրություններ ունենք, այդ թվում եւ ծանոթ է քրդական այս օջախին: Ռադիոժամի պահպանման համար բերեցի իմ տղային՝ Տիտալին, հետո աղջկաս՝ Լեյլային բերեցի, հետո համակարգչի վրա աշխատող Գյուլիզարին բերեցի: Այս աշխատանքը հետագայում գնահատվեց, նույնիսկ Իրաքյան Քուրդիստանից հրավիրեցին ինձ ռադիոժամի 50-ամյակը նշելու համար՝ 2005-ին: Շատ ճոխ միջոցառում կազմակերպեցին, այնտեղ հավաքված էին մոտ 2000 մարդ՝ մտավորականներ, քաղաքական ղեկավարներ. նշեցին, որ Իրաքի Քուրդիստանի կառավարությունը շնորհավորում է Հայաստանից քրդերեն հաղորդումների հեռարձակման 50-ամյակը: Այնտեղ ելույթ ունեցան մշակույթի նախարարը եւ Էրբիլի քաղաքապետը, այլ ելույթներ էլ եղան: Ինձ ոսկե մեդալով պարգեւատրեցին: Հայաստանում նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանով ինձ վաստակավոր լրագրողի կոչում տրվեց:

**- Երբ դուք Էրբիլում էիք, ռադիոժամը լա՞վ էր լսվում:**

- Շատ լավ լսվում էր: Ես լսել եմ նաեւ Իրանում, Թուրքիայում եւ Իրաքում: Թուրքիայում ասում են, որ պատրաստ են վերջին ոչխարը վաճառել, միայն թե մեկ ռադիոընդունիչ գնեն, որ քրդական ռադիոժամը լսեն:

**- Քրդական ռադիոժամը կարո՞ղ է արդյոք նախկին հզորությունը եւ ազդեցությունը վերականգնել:**

- Դրա համար մեզ պետք են պայմաններ, ռադիոժամի ավելացում, գոնե մինչեւ 1 ժամ, եւ դա ոչ միայն մեր, այլեւ արտասահմանյան ռադիոունկնդիրների խնդրանքն է:

**- Ո՞ր ժամին է քրդական ռադիոժամը հեռարձակվում ներկայումս, եւ ո՞ր ժամն է հարմար:**

- Հիմա հեռարձակվում է 17.15-ից մինչեւ 17.45, կրկնվում է 19.45-20.15: Սակայն ամենահարմարը կլիներ 20.00-ից հետո, որովհետեւ Թուրքիայի հետ 2 ժամվա տարբերություն կա, իսկ այնտեղ 20 մլն քուրդ կա, եւ նրանց համար դա աշխատանքային ժամ է:

Դիարբեքիրի քաղաքապետը՝ Օսման Բայդեմիրը, մի քանի տարի առաջ կոնֆերանս էր հրավիրել, որին ներկա էր եղել Երեւանից բանասիրական գիտությունների թեկնածու Զարքազ Մստոյանը, քաղաքապետը կոնֆերանսի ժամանակ հայտարարել էր, որ «այսօր քրդերեն իմանալու համար ես առաջին հերթին երախտապարտ եմ մորս, հետո՝ Երեւանի ռադիոյին»:

Հարցազրույցը վարեց
ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԸ

*Հ.Գ. Հարցազրույցը պատրաստ էր հրապարակման, երբ հայտնի դարձավ, որ անվանի լրագրողը Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրեն Ա. Ամիրյանի հրամանով, աշխատանքային գործունեության 50-ամյակի եւ Հանրային ռադիոյի 58- ամյակի կապակցությամբ, արժանացել է շնորհակալագրի եւ պարգեւատրման:*

ԱՐՁԱԳԱՆՔ

# Նամակ խմբագրությանը

**«Ազգ»-ի նկատմամբ մեծագույն հարգանք ունենալով հանդերձ՝ չկարողացա շրջանցել ապրիլ 27-ի հրապարակումներից մեկը՝ «Անիրազեկությո՞ւն, թե՞ շրջանցում» վերնագրով: Որպես առավել իրազեկ մեկը, կարծում եմ, որ «Ազգ»-ի լրագրողի՝ «Իսկ ո՞ւր մնաց այս մասին հայաստանյան մամուլում առաջին իրազեկողը...» հարցի պատասխանը ճշտման կարիք ունի: Հարգարժան լրագրողին կուզենայի հայտնել, որ «Ազգ»-ի հրապարակումից 7 տարի առաջ՝ 2003 թվականին, Մայր աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի մարտ-ապրիլ միացյալ համարում, «Ինչպե՞ս եւ ե՞րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ Եղեռնի նահատակաց հիշատակի օր» հրապարակմամբ, հանգուցյալ Սանդրո Բեհբուդյանն արդեն իսկ նվաճել է առաջին բացահայտողի «դափնին»՝ ներկայացնելով նաեւ ապրիլի 24-ը Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելուն վերաբերող արխիվային երեք փաստաթուղթ: Ի դեպ, դրանցից մեկը Վրթանես Փափազյանի նամակն է Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին, մյուսը՝ 1921թ. հոկտեմբերին հրապարակված հայրապետական կոնդակը:**

**Եթե հարգարժան լրագրողը «Էջմիածին» ամսագիրն ընթերցելու առիթ չի ունեցել, ապա առանց ավելորդ համակնոտության հայտնեմ նաեւ, որ նույնի մասին 2007 թվականին հրապարակում է ունեցել նաեւ տողերիս հեղինակը «Հայոց աշխարհ» թերթի ապրիլի 24-ի համարում («Ապրիլ 24-ը՝ Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կոնդակով»): Այս պատմությունը տեղ է գտել նաեւ 2007թ. «Շողակաթ» հեռուստաընկերության համար պատրաստված «Մշավառ կանթեղներ» հաղորդման մեջ, որն առ այսօր ցուցադրվում է: Այս ամենից զատ՝ «Ազգ»-ից մեկ տարի առաջ՝ 2009թ. ապրիլի 1-ին, բավական մանրամասն տեղեկություններով հոդված է հրապարակել Lragir.am էլեկտրոնային կայքը («Ինչպես առաջին անգամ նշվեց ապրիլի 24-ը որպես ոգեկոչման օր»): Չեմ բացառում, որ ինձ հայտնի այս հրապարակումներից բացի եղած լինեն նաեւ այլ հրապարակումներ:**

**Օգտվելով առիթից, կուզենայի անդրադառնալ նաեւ «անիրազեկության» մեկ այլ փաստի: «Ազգ»-ն իր ապրիլի 23-ի մշակութային հավելվածում ներկայացրել էր ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ տպագրված «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» ալբոմը: Ինչպես պարզ դարձավ, ալբոմի հեղինակները ներկայացրել են աշխարհի տարբեր երկրներում 1915-ի Մեծ Եղեռնին նվիրված բոլոր հուշակոթողները: Ինքս ալբոմը թերթելու առիթ չեմ ունեցել, սակայն, «Ազգ»-ի հրապարակումից այն տպավորությունը ստացա, որ շրջանցված է Հայաստանում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը՝ կանգնեցված 1965 թվականին Մայր աթոռի տարածքում, Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ: Շատերի պնդմամբ՝ այս հուշարձանը նահատակների հիշատակն հավերժացնող առաջին հուշարձանն էր Հայաստանում: Ի դեպ, այս մասին եւս հայաստանյան մամուլում եղել են հրապարակումներ:**

**Հարգանքներով՝ «Ազգ»-ի մշտական ընթերցող**

**ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ**

Շնորհակալությամբ հարգարժան նամակագրին արագ արձագանքի եւ հանգամանալի տեղեկությունների համար (սկզբունքորեն առաջինը լինելու, առավելեւս՝ դափնիներ ունենալու հավակնությունից զերծ)՝ մի քանի նկատառումներ մեր կողմից, տորեւ:

«Էջմիածին» ամսագրի նշված համարի հրապարակմանը ծանոթանալ չհաջողվեց ժամանակի առումով: Ցավոք, չհաջողվեց գտնել նաեւ Lragir.am-ի 2009-ի ապրիլի 1-ի՝ «Ինչպես առաջին անգամ նշվեց ապրիլի 24-ը որպես ոգեկոչման օր» հոդվածը: 2007-ի ապրիլի 24-ին «Հայոց աշխարհ» օրաթերթում նամակագրի «Ապրիլի 24-ը՝ Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կոնդակով» հոդվածը մանրամասն իրազեկում է նահատակների ոգեկոչման օր հռչակելու հանգամանքները:

Սակայն, մեր հրապարակումը առաջինը համարելով, նկատի է առնվել հրապարակման բնույթը դրա հիմնական շեշտադրումը, որով եւ տարբերվում է նախորդներից (գոնե մեզ ծանոթ): Հայաստանյան մամուլում, թերեւս, մեր թերթը առաջինն է հիշատակել գաղափարը հղացողին, երբ Դեր Զորի անապատներում եռամյա դժոխային տառապանքներից, դեգերումներից հրաշքով փրկված Երվանդ Օտյանը վերադարձավ Պոլիս եւ անմիջապես ուղղվեց «Ժամանակ» օրաթերթի խմբագրատուն: 1918-ի նոյեմբերին նա տորագրեց առաջին հոդված-կոչը (Ողջոյն ձե՜զ...), որին հաջորդեց Հայոց եղեռնի նահատակների հիշատակի հատուկ օր ընդունելու առաջարկը՝ «Ազգային նոր տօնը» (1918, 4-6 դեկտեմբեր) խորագրի ներքո: **«...Ու հիմա, որ ազատութեան արեւը վերջապէս ծագեցաւ մեր արիւնազանգ հայրենիքին վրայ, արդեօք նուիրական պարտականութիւն մը չէ հաստատել, Վարդանանց տեղ, ազգային-կրօնական մեծ տօնը ի յիշատակ մեր նոր ու գերագոյն մարտիրոսութեան:**

**Ասոր համար ամբողջ հայութիւնը պէտք է իր կամքը պարտադրէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հանդիսաւոր արարողութեամբ մը այս մեծ տօնը հռչակուի աշխարհի ամէն կողմերը գտնուող հայերուն»**, գրում է Երվանդ Օտյանը: Հիշյալ հրապարակումը հայաստանյան մամուլում առաջին անգամ տպագրվեց «Ազգ» օրաթերթի 2010, 24 ապրիլի «Մշակույթ-Հավելվածում»՝ Ազգային գրադարանի մատենագետ Սուսաննա Գալստյանի ներկայացմամբ:

Սույն նամակը ավելի է հիմնավորում մեր մտահոգությունը՝ վերաբերող ոչ միայն «Հայլուրի», այլեւ մի շարք լրատվամիջոցների՝ նախապես հրապարակված անդրադարձվող նյութին հղում չանելու ոչ մասնագիտական պահվածքին, ինչը դժբախտաբար շրջանցում է մեր նամակագիրը: (Երբեմն ուղղակի ամբողջությամբ է ընթերցվում արդեն հրատարակված տեքստը՝ չնշվելով աղբյուրը, երբեմն էլ՝ աննշան փոփոխությունների ենթարկված):

Ինչ վերաբերում է «Ցավի, հիշողության եւ պայքարի կոթողներ» ալբոմի անդրադարձին, զարմանալիորեն ուշադրությունիցս վրիպել է Ռաֆայել Իսրայելյանի հեղինակած Ս. Էջմիածնի տարածքում, նամակագրի հաղորդմամբ, 1965-ին տեղադրված խաչապատկերային հուշակոթողը (Նոր Խարբերդում տեղադրված հուշակոթողը նույնպես թվագրված է 1965 թ.), նաեւ նկատենք, որ ըստ ալբոմի, Մայր աթոռի սույն կոթողը թվագրված է 1961-62 թթ.: **Ս. Բ.**

# Միջազգային

«Մոս ժամանակներու պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը կհեռացվի պաշտոնից», նման կանխատեսումներ ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ անում են ոչ առաջին անգամ: Աբիեւը, սակայն, շարունակում է պաշտոնավարել: Մինսկի խմբի համանախագահների վերջին այցելության օրերին նա նույնիսկ «ռազմաճակատի առաջին գծում էր եւ անձամբ էր վերահսկում հրամանատարաշտաբային զորավարժությունների ընթացքը»:

ղեկությունների, վերջերս Նաղիեւն արժանացել է «բարձր ընդունելության»: Նրան վստահեցրել են, որ «շարունակում է համարվել թիմակից եւ մոտ ապագայում կրկին կհրավիրվի ծառայության»:

Ըստ այդմ, թերթի աղբյուրը նաեւ տեղեկացրել է, որ «Սաֆար Աբիեւի պաշտոնանկության հարցը գրեթե լուծված է»: Նրան հավանաբար կփոխարինի Իլհամ Ալիեւի գլխավոր ռազմական խորհրդատու Վահիդ Ալիեւը, որը վերջերս «նախագահի հատուկ հանձնարարու-

Նախիջեւանում: Թերթը գրում է, որ Էյուբովին հաջողվել է համոզել նաեւ աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւին, «բայց ամեն դեպքում վերջին խոսքը պիտի Իլհամ Ալիեւն ասի», իր վերլուծականը զգուշորեն եզրափակում է «Մուսավաթ»-ի պաշտոնաթերթը:

Այս «կոնստրուկցիայում», սակայն, մի բաց առկա է. ի՞նչ է սպասում Սաֆար Աբիեւին: Նա իշխանությունից կհեռանա՞ վերջնականապես, թե՞ Իլհամ Ալիեւն ստիպված է լինելու մի նոր պաշտոն ստեղ-

## Գումարելիների տեղափոխություն. հանուն ինչի՞

Այդուհանդերձ, պաշտպանության երկարամյա նախարարի պաշտոնանկության թեման կրկին շրջանառվել է: Այս անգամ՝ բոլորովին այլ համատեքստում:

Վերջերս առանց որեւէ մեկնաբանության, համենայն դեպս՝ հասարակության համար, պաշտոնից ազատվել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարի առաջին տեղակալ Ալի Նաղիեւը: Վերջինս, լինելով նախիջեւանցի, երկար տարիներ համարվել է Հեյդար Ալիեւի մերձավոր շրջապատի մարդ: Հարաբերությունների այդ մակարդակը չի փոխվել նաեւ Իլհամ Ալիեւի օրոք: Բայց թե ինչու է նա հեռացվել զբաղեցրած պաշտոնից, մնում է գաղտնիք: Որոշ ակնարկների համաձայն, Նաղիեւը «վաս է կատարել ընդդիմության եւ արեւմտյան դիվանագիտական ներկայացուցիչների շփումները վերահսկելու Իլհամ Ալիեւի հանձնարարականը»: Այլ աղբյուրների կարծիքով, «Նաղիեւի անունը հոլովվել է տնտեսական մի շարք գործարքներում»:

Այսպես թե այնպես, գեներալ Նաղիեւն այլեւս ազգային անվտանգության համակարգում չէ: Բայց դա չի նշանակում, թե նա վստահությունը կորցրել է լիովին: Ըստ «Եկի մուսավաթ»-ի ձեռք բերած տե-

թյամբ տեսչական շրջայց է կատարել մերձճակատային զորամասերում»:

Այն հանգամանքը, որ Վահիդ Ալիեւն իր առաքելությունն իրականացրել է առանց պաշտպանության նախարարի հետ երթուղին համաձայնեցնելու եւ շրջայցի ժամանակ էլ օգտվել է «միայն իր աշխատակազմի մասնագետների ծառայությունից», ադրբեջանցի որոշ վերլուծաբանների թույլ է տվել եզրակացնել, որ Իլհամ Ալիեւը «Սաֆար Աբիեւին այլեւս չի վստահում»:

Նման եզրահանգման վրա էլ կառուցվել է վարկած, որ Վահիդ Ալիեւը «հավանաբար կնշանակվի պաշտպանության նախարար, իսկ վերջինիս ազատված պաշտոնը կզբաղեցնի ազգային անվտանգության նախկին փոխնախարար Նաղիեւը»:

Այս առթիվ «Ենի մուսավաթ»-ը գրում է, որ Նաղիեւի՝ կրկին ծառայության կոչելու հարցն Իլհամ Ալիեւի մոտ եռանդուն պաշտպանում է գեներալ Բեյլար Էյուբովը՝ նախագահի անվտանգության ծառայության պետը, որն այդ պաշտոնին է դեռեւս Հեյդար Ալիեւի ժամանակներից, իսկ մինչ այդ վերջինիս անձնական թիկնապահն է եղել

ծել, որպեսզի բավարարի իշխող վերնախավին այդքան երկար եւ հավատարմորեն ծառայած գեներալի հավակնությունները:

Եվ հետո. այդ վերադասավորումները, որ կանխատեսում են ադրբեջանցի վերլուծաբանները, միայն ներքին քաղաքակա՞ն դրդապատճառներով են արվելու: Առհասարակ, նկատելի է, որ վերջին շրջանում Իլհամ Ալիեւը մեծացնում է բանակի, ուժային կառույցների հանդեպ ուշադրությունը: Որոշ տեղեկությունների համաձայն, ադրբեջանական զինված ուժերում ծառայություն տանող «բոլոր խրամատային սպաները գործուղվել են մերձճակատային զորամասեր»: Նրանք փոխարինել են այսպես կոչված «ուսումնարանականներին»:

Բայց այս դեպքում էլ պաշտպանության նախարարի պաշտոնանկությունն է, որ տրամաբանական չի թվում. Սաֆար Աբիեւն ունի «խրամատային զինվորականի» համարում, մինչդեռ Իլհամ Ալիեւի գլխավոր ռազմական խորհրդատու Վահիդ Ալիեւը «պարահանդեսի գեներալ» է:

Ի վերջո, էականը ոչ թե «գումարելիների տեղափոխությունն» է, այլ՝ թե հանուն ինչի՞ է դա արվում:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

## Դատարանը մերժել է թուրքական խմբակցության հայցը

**Մինեսոտայի (ԱՄՆ) Սբ Պողոս քաղաքի շրջանային դատարանի դատավոր Դոնովան Ֆրենկը մերժել է «Ամերիկայի թուրքական կոալիցիայի» հայցը, որ իրենց կայքը անարժանահավաս որակելու «Մինեսոտայի զույգ քաղաքներ համալսարանի» որոշումը անարգանք է՝ ուղղված իրենց հասցեին:**

**Հայցը ներկայացվել էր այն բանից հետո, երբ համալսարանի ղեկավարությունը զգուշացրել էր ուսանողներին՝ չօգտվել թուրքական այդ կայքից՝ որպես անարժանահավասի:**

**Դատավորի համոզմամբ՝ համալսարանի «Ողջակիզման եւ ցեղասպանության ուսումնասիրության» կենտրոնը սահմանադրականորեն իր ակադեմիական իրավասությունների մեջ է որոշելու, թե տվյալ առարկան ինչպես եւ ինչ աղբյուրների օգտագործման միջոցով պետք է ուսուցանել:**

**Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդման, հայցին մոտիկից հետեւում էին գիտական շրջանակները, որոնցից «Մերձավոր Արեւելքի ուսումնասիրությունների ասոցիացիան» դիմել էր Թուրքական կոալիցիային՝ հայցը հետ վերցնելու խնդրանքով, պատճառաբանելով, որ դա վնասում էր ակադեմիական գործունեության ազատությանը: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան եւ Հայկական ուսումնասիրությունների ընկերությունը նույնպես պաշտպանել էին Մինեսոտայի համալսարանի որոշումը:**

## Քաղդաֆիի զորքերը կրկին վերահսկում են Թունիսի սահմանը

**ՆԱՏՕ-ի օդուժը երեկ գիշեր հարվածներ է հասցրել Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլիին: Ֆրանսպրեսի տվյալներով, Տրիպոլիի կենտրոնում պայթել է առնվազն 5 հրթիռ կամ ռումբ:**

**Մուամմար Քաղդաֆիի կառավարությունը որեւէ ձեւով չի մեկնաբանել ռմբակոծությունը, ոչինչ չի հաղորդվել զոհերի կամ ավերածությունների մասին:**



**Ինչ վերաբերում է ցամաքային գործողություններին, կառավարական զորքերը ապստամբներին դուրս են մղել Տրիպոլիից հարավ-արեւմուտք ընկած Դահիբ Վազին սահմանային անցակետից: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը:**

**Ռոյթեր գործակալության տվյալներով, Քաղդաֆիի զորքերը նախ հրթիռակոծել են Թունիսին սահմանակից տարածքը, ապա ցամաքային մարտերով հինգ տասնյակ ապստամբներին ստիպել են լքել սահմանային անցակետը եւ փախչել Թունիս: Այնտեղ ապստամբները զենքը վայր դնելով հանձնվել են տեղական իշխանություններին:**

**Լիբիա-Թունիս սահմանը լիբիացի ապստամբների վերահսկողության տակ էր անցել մեկ շաբաթ առաջ: Անցած յոթ օրերին սահմանը բաց էր, եւ Լիբիայից Թունիս էր անցել մոտ 30 հազար մարդ: Հակառակ ուղղությամբ սահմանը հատում էին դեղորայքով, պարենով, առաջին անհրաժեշտության առարկաներով բեռնված քարավաններ:**

**Հիմա, երբ սահմանը կրկին կառավարական զորքերի վերահսկողության տակ է, ապստամբների ցամաքային բեռնամատակարարման հետ դժվարություններ են ծագել:**

16 ԶՈՀ ԵՎ 20 ՎԻՐԱՎՈՐ

## Բան Կի Մունը դատապարտեց Մարաքեշի ահաբեկչությունը



**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը դատապարտել է Մարոկկոյի Մարաքեշ քաղաքում ապրիլի 28-ին տեղի ունեցած ահաբեկչությունը, որի հետեւանքով զոհվել էին 16 եւ վիրավորվել 20 անձինք (տեղացիներ եւ օտարներ): Գլխավոր քարտուղարի վարչակազմի պաշտոնական ներկայացուցչի հայտարարության մեջ ասվում է, որ Բան Կի Մունը «սարսափահար է այդ ոճրագործությունից»:**

**Գլխավոր քարտուղարը ցավակցություն է հայտնել Մարոկկոյի կառավարությանն ու ժողովրդին, ինչպես նաեւ պայթյունից տուժած մյուս երկրներին:**

**Նախօրեին ՄԱԿ-ի ԱԽ անդամ երկրները մամուլի համար արած հայտարարությամբ վճռականորեն դատապարտել էին Մարաքեշի ահաբեկչությունը:**

**Ապրիլի 28-ին Մարաքեշի Ջեմաա էլ Ֆնա հրապարակում պայթյունից զոհված 16 անձանց մեջ կան Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի քաղաքացիներ: BBC-ն նշում է, որ ահաբեկչությունը բացասաբար կանդրադառնա Մարոկկոյի զբոսաշրջության ապագայի վրա:**

**Մարոկկոյի անվտանգության ծառայությունները որոնում են ահաբեկչության կազմակերպիչներին եւ իրականացնողներին: Տեղական ԶԼՄ-ները գրում են, որ մարտին եւ ապրիլին երկրում բողոքի ցույցերի մասնակիցները պահանջել էին սահմանափակել թագավորի լիազորությունները: Կառավարող Ալաուիների գահատոհմը իշխում է արդեն երեքուկես դար: Բացառված չէ, որ ներկայումս իսլամիստները փորձում են ցույցերի նոր ալիք հրահրել եւ զավթել իշխանությունը:**

## Նոր ղեկավարներ Պենտագոնում եւ ԿՀՎ-ում

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման նշանակել է Պենտագոնի եւ Կենտրոնական հետախուզական վարչության նոր ղեկավարներ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ պաշտպանական գերատեսչության ղեկավար է դարձել ԿՀՎ ներկայիս տնօրեն Լեոն Պանետտան, իսկ նրա տեղը ԿՀՎ-ում կզբաղեցնի Աֆղանստանում ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատար, գեներալ Դեւիդ Պետրեուսը:

Ենթադրվում է, որ Պանետտան պաշտպանական նախարարի պարտականությունների կատարմանը ձեռնամուխ կլինի ամռանը, երբ Պենտագոնի ներկայիս ղեկավար Ռոբերտ Գեյթսը անցնի կենսաթոշակի: Գեներալ Պետրեուսը նոր պաշտոնը կստանձնի աշնանը. մինչ այդ նա պետք է վերահսկի Աֆղանստանում ամերիկյան զորաբաժնի թվակազմի կրճատումը:

Կոալիցիոն զորքերի հրամանատարի պաշտոնը կզբաղեցնի գեներալ-լեյտենանտ Ջոն Ալլենին, որը ներկայումս ԱՄՆ զինված ուժերի կենտրոնական հրամանատարության ղեկավարի տեղակալն է:

Օբաման նաեւ հրապարակել է Աֆղանստանում ԱՄՆ նոր դեսպանի անունը՝ Ռայան Կրոկեր: Վերջինս դեսպան է եղել Իրաքում, Պակիստանում, Սիրիայում, Քուվեյթում եւ Լիբանանում:

Նոր նշանակումներն անսպասելի չեն: Մասնավորապես Պանետտայի եւ Պետրեուսի նոր պաշտոնների վերաբերյալ ամերիկյան ԶԼՄ-ներում հաղորդումներ էին հայտնվել արդեն ապրիլի սկզբներին: Ռայան Կրոկերի նշանակման մասին տեղեկություններ էին հայտնվել մի քանի օր առաջ:

## Մեդվեդեւը պաշտոնանկ է արել պաշտպանության փոխնախարարին

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը պաշտոնանկ է արել այդ երկրի պաշտպանության փոխնախարար Վլադիմիր Պոպովկինին: Պոպովկինը պաշտոնանկ է արվել այլ աշխատանքի անցնելու պատճառով: Ոչ պաշտոնական աղբյուրները «Ինտերֆաքսի» հետ զրույցում ասել են, որ նա կարող է գլխավորել «Ռոսկոսմոսը»՝ փոխարինելով Անատոլի Պերմինովին:

**Հ. Ա.**

## Ճապոնիայի հյուսիս-արեւելքում երկաթուղային հաղորդակցությունը վերականգնվեց

Ճապոնիայի հյուսիս-արեւելքում արագընթաց երկաթուղիների «Սինկանսեն» ցանցում երթեւեկությունն ամբողջովին վերականգնված է մարտի 11-ի երկրաշարժից եւ ցունամիից 49 օր անց;

Ապրիլի 29-ին Տոկիոյից Տոհոկուի գծով դեպի Աոմորի քաղաք (Հոնսյու կղզու ծայր հյուսիս) է մեկնել առաջին ճեպընթացը, հաղորդում է Կիոդո գործակալությունը:

675 կիլոմետրանոց Տոհոկուի գծով «Սինկանսեն» գնացքների երթեւեկության վերականգնումը համընկավ Ճապոնիայում «ոսկե շաբաթվա» սկզբին. պետական տոների այդ օրերին բազմաթիվ ճապոնացիներ գնացքով ուղեւորություններ են կատարում:

Դեպի Աոմորի երթեւեկող առաջին գնացքների տոմսերը շատ արագ սպառվել են:

«Սինկանսեն» ճեպընթացների ցանցը կարեւոր տարր է Ճապոնիայի տրանսպորտային համակարգում: 5-10 րոպեն մեկ երթեւեկող ճեպընթացները սլանում են 260 կմ/ժամ միջին արագությամբ:

# «Կոկա-կոլան» աջակցում է մանկապատանեկան ֆուտբոլին

*Ով փորձել է պատժել ՀՖՖ նախագահին, լավ բան չի ստացվել*

Արդեն 2-րդ տարին «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերությունը ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի հետ համատեղ հանրակրթական դպրոցների թիմերի միջեւ անցկացնում է «ՀՖՖ-Կոկա-կոլա» գավաթի խաղարկություն: Արդեն ավարտվել է մրցաշարի առաջին փուլը, որին մասնակցել են Երեւանի, ՀՀ մարզերի եւ Արցախի շուրջ 400 դպրոցների թիմեր, որոնցում ընդգրկվել են 1999-2001-ի ծնված պատանիներ ու աղջիկներ: Առաջին փուլի արդյունքներով ուժեղագույն 32 թիմերը կշարունակեն պայքարը եզրափակիչ փուլում, որի մեկնարկը կտրվի մայիսի 4-ին: Գավաթային սկզբունքով անցկացվելիք մրցաշարի եզրափակիչ հանդիպումը կկայանա մայիսի 21-ին: Հանդիպումները տեղի կունենան Խորենացի 47 եւ Ագաթանգեղոսի 8 հասցեներում գտնվող ֆուտբոլի փոքր խաղադաշտերում:



ՖՈՏՈԼՈՒՐ

Մրցաշարի 2-րդ փուլի մեկնարկին էր նվիրված երեկ ֆուտբոլի ֆեդերացիայում կայացած ՀՖՖ նախագահի **Ռուբեն Հայրապետյանի** եւ «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն **Գագիկ Դանիելյանի** համատեղ ասուլիսը: Բացելով այն, ՀՖՖ նախագահն իր շնորհակալությունը հայտնեց ընկերությանը հայրենանվեր գործի, մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանն աջակցելու համար, միաժամանակ կոչ արեց մյուս ընկերություններին էլ հետեւել «Կոկա-կոլայի» օրինակին:

Իր հերթին Գագիկ Դանիելյանը շնորհակալություն հայտնեց ՀՖՖ-ին, որ հնարավորություն է ընձեռել նման միջոցառում կազմակերպել: Նա տեղեկացրեց, որ «Կոկա-կոլան» արդեն 70 տարի համագործակցում է ՖԻՖԱ-ի, մարզական այլ խոշոր կազմակերպությունների հետ, իսկ նման մրցաշարեր կազմակերպում է աշխարհի շուրջ 100 երկրներում: Ընկերության նախագահը հույս հայտնեց, որ մրցաշարը կդառնա ավանդական, հետագայում հնարավոր կլինի ընդլայնել աշխարհագրությունը, թիմեր հրավիրել նաեւ արտերկրից, իսկ մրցաշարի հաղթողին հնարավորություն ընձեռել մասնակցելու նմանատիպ միջազգային մրցաշարի:

Օգտվելով առիթից, լրագրողները ՀՖՖ նախագահին հարցեր ուղղեցին նաեւ մեծ ֆուտբոլից, ազգային հավաքականից: Նա նշեց, որ ազգային հավաքականի ֆուտբոլիստները ռուսների հետ ոչ-ոքիի համար պարգեւատրվել են, թեեւ ինքը դժգոհ էր արդյունքից: ՀՖՖ նախագահը նաեւ տեղեկացրեց, որ Ռուսաստանի ֆուտբոլային միությունը ռուս ֆուտբոլասերների հարցով չի դիմել Հայաստանի ֆեդերացիա: Նա պարզաբանեց, որ մարզադաշտ չեն թողել այն ռուս ֆուտբոլասերներին, որոնց տոմսերը նախատեսված չէին Ռուսաստանի ֆանատների համար հատկացված սեկցիայի համար: Այդ ամենն արվել է զուտ անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

Անդրադառնալով օրերս տեղի ունեցած տհաճ միջադեպին, Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ Արկադի Անդրեասյանի հարցով ֆեդերացիայի կարգապահական կոմիտեն իր տեսակետը ներկայացրել է գործկոմին, որի նիստում էլ որոշում կկայացվի: Նախագահը խոստացավ նիստին թույլատրել նաեւ լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությունը:

Ըստ Ռուբեն Հայրապետյանի, ֆուտբոլի Հայաստանի առաջնությունը հետաքրքրական պայքարում է անցնում, ուրախացնում է մարզային թիմերի առաջընթացը: Ցավալի է միայն «Արարատի» թույլ ելույթը, որի ղեկավարությունը կրկին սկսել է ինտրիգներ ստեղծել:

Անդրադառնալով ԱԺ-ում իր գործունեությանը, Ռուբեն Հայրապետյանը խոստովանեց, որ խորհրդարանն իր տեղը չէ, օրենսդիր աշխատանքով զբաղվելու փոխարեն ինքն ավելի կարեւոր գործեր ունի կատարելու հայկական ֆուտբոլում: Նա մտադիր է խորհրդարանական հաջորդ ընտրություններում իր թեկնածությունը չառաջադրել, եթե որոշողն ինքը լինի: Սակայն ինքը կուսակցական է, եւ եթե կուսակցությունը գտնի, որ պետք է խորհրդարանում լինի, ապա կշարունակի աշխատանքը:

Ռուբեն Հայրապետյանը նաեւ իր տեսակետը հայտնեց ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանի այն հայտարարությանը, թե նիստերից անհարգելի պատճառով բացակայող պատգամավորները պետք է պատժվեն, նրանց աշխատավարձից որոշակի գումար պետք է պահվի. «Ես մարդկանց խորհուրդ չեմ տա ինձ պատժել: Ով փորձել է, լավ բան չի ստացվել: Աշխատավարձի պահով համաձայն եմ ԱԺ նախագահի հետ: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես մինչ օրս ԱԺ-ից աշխատավարձ չեմ ստացել»:

## Ուկրաինացի նեյրովիրաբույժը հաղթեց «Ռիբկա-4-ին»

**Ուկրաինացի նեյրովիրաբույժ Անդրեյ Սլյուսարչուկն առանց խաղատախտակին նայելու 2 պարտիայից բաղկացած յուրօրինակ մրցախաղում 1,5-0,5 հաշվով հաղթել է «Ռիբկա-4» համակարգչային շախմատային ծրագրին, որի բարդությունը համապատասխանում է 3000 վարկանիշին: Սլյուսարչուկը 1-ին պարտիայում հաղթել է սպիտակներով, 2-րդում սեւերով հաշտություն է կնքել:**

**«Այս մրցախաղում ես մարզական հետաքրքրություն չունեի: Այդ ամենը գիտափորձ էր: Շախմատը պարզապես միջոց էր ցուցադրելու հիշողության զարգացման մեթոդը, որը ներկայացնելու ենք պետական մրցանակի», խաղից հետո նշել է բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրեյ Սլյուսարչուկը:**

**Ամենահետաքրքրականն այն է, որ Սլյուսարչուկն ընդամենը 8 ամիս է զբաղվում շախմատով: Խաղից առաջ նրան մանրամասն խուզարկել են: Մինչ «Ռիբկա-4-ի» հետ մրցավեճի բռնվելը Սլյուսարչուկը հայտարարել է, որ եթե մեկ ամսում պետությունն իրեն հնարավորություն չընձեռի իրականացնելու իր ծրագրերը, ապա ինքը կհեռանա երկրից: Նա ցանկանում է Ուկրաինայում ուղեղի հետազոտությունների նպատակով հատուկ գիտահետազոտական ինստիտուտ հիմնել ու զբաղվել գիտական գործունեությամբ: Սլյուսարչուկը նաեւ հավաստիացրել է, որ իր աշխատության նկատմամբ համապատասխան վերաբերմունքի դեպքում շուտով կարող է Նոբելյան մրցանակի դափնեկիր դառնալ:**

**Ուկրաինայում Սլյուսարչուկը հայտնի է իր ֆենոմենալ հիշողությամբ: Նա հիշում է «Պի» թվի 30 մլն թվանշանները, անգիր գիտի 20 հազար գրքի բովանդակությունը եւ հիշողությամբ կարող է կարդալ դրանց յուրաքանչյուր էջը:**

## «Սան Լորենսոն» հրավիրում է Մարադոնային

**Բացառված չէ, որ Արգենտինայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Դիեգո Մարադոնան գլխավորի արգենտինական «Սան Լորենսո» ակումբը: Վերջինիս գլխավոր մարզիչ Ռամոն Անխել Դիասը օրերս հրաժարական է տվել թիմի հերթական պարտությունից հետո: Ակումբի նախագահ Կառլոս Աբդոն արդեն կապվել է Մարադոնայի ներկայացուցիչների հետ, որպեսզի քննարկեն պայմանագրի հարցը: «Սան Լորենսոյի» գլխավոր մարզչի պաշտոնին հավակնում են նաեւ Դիեգո Կանյան, Լեոնարդո Մադելոնը, Ալֆիո Բասիլեն եւ Մարսելո Բիելսան:**

## Ֆալկաոն ջախջախեց «Վիլյառեալին»

Եվրոպայի լիգայի մրցաշարում իսպանական «Վիլյառեալը» մնացել էր պորտուգալական երեք թիմերի հետ: Արդեն կիսաեզրափակիչ առաջին խաղից հետո վստահաբար կարելի է փաստել, որ իսպանական ակումբը դուրս կմնա պատվավոր մրցանակի համար մղվող պայքարից: Պորտոյում տեղի համանուն թիմի հետ խաղում «Վիլյառեալը» 1-5 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց: Հանդիպման հերոսը «Պորտոյի» հարձակվող Ֆալկաոն էր, որը 4 անգամ գրավեց հյուրերի դարպասը: Եվրոպայի լիգայի լավագույն ռմբարկուն գոլերի թիվը հասցրեց 15-ի ու կրկնեց 1995/96-ի մրցաշրջանում ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում Յուրգեն Քլինսմանի ռեկորդային ցուցանիշը:

Կիսաեզրափակիչի մյուս խաղում պորտուգալական «Բենֆիկայի» եւ «Բրագայի» մրցավեճը շահեցին դաշտի տերերը (2-1): Պատասխան խաղում, որը կայանալու է մայիսի 5-ին, «Բրագան» կփորձի եզրափակիչի ուղեգիր նվաճել:



## Տաթեւ Աբրահամյանը բավարարվեց արծաթե մեդալով

**ՖԻԴԵ-ի վարպետ Տաթեւ Աբրահամյանին չհաջողվեց նվաճել շախմատի ԱՄՆ-ի չեմպիոնուհու տիտղոսը: Լրացուցիչ մրցախաղում հայ շախմատիստուհին այդ տիտղոսը զիջեց Աննա Զատոնսկիխին: Արագ շախմատի առաջին պարտիայում Տաթեւը սպիտակներով պարտվեց, իսկ երկրորդ պարտիայում սեւերով հաղթեց: Չեմպիոնուհուն որոշելու համար մրցակցուհիները վճռորոշ՝ 3-րդ պարտիան անցկացրին: Սակարկությունների արդյունքում Զատոնսկիխն ընտրել էր սեւ խաղաքարերը: Նա պարտիայի համար 20 րոպե ուներ Տաթեւի 45 րոպեի դիմաց, սակայն ըստ մրցակարգի Զատոնսկիխը ոչ-ոքիի դեպքում հաղթող կճանաչվեր: Այդպես էլ եղավ: Տաթեւին չհաջողվեց հաղթել ու ստիպված էր հաշտություն կնքել:**



**Այսպիսով, շախմատի ԱՄՆ-ի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց Աննա Զատոնսկիխը, իսկ Տաթեւ Աբրահամյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով, ինչը եւս մեծ հաջողություն է հայ շախմատիստուհու համար: Մինչ այդ նա 3 անգամ (2005, 2008, 2010-ին) դարձել էր բրոնզե մրցանակակիր:**

**Ինչ վերաբերում է Զատոնսկիխին, ապա նա բավական դժվարին պայքարում կարողացավ հասնել չեմպիոնական բարձունքին: Հիշեցնենք, որ նախնական փուլում Զատոնսկիխը միայն վերջին պահին իրավունք ստացավ մասնակցելու կիսաեզրափակիչին՝ լրացուցիչ մրցախաղում հաղթելով Սաբրինա Ֆոյշորին: Կիսաեզրափակիչում էլ Իրինա Կրուշի հետ մրցապայքարում նույնությամբ կրկնվել էր Տաթեւի հետ եզրափակիչ մրցախաղի սցենարը:**

## Նախապատրաստվում են Եվրոպայի առաջնությանը

**Այս օրերին մեր հանրապետության առաջատար չորս շախմատիստուհիներ՝ Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանն ու Նելլի Աղինյանը գրոսմայստեր Արա Մինասյանի գլխավորությամբ Ծաղկաձորում ուսումնամարզական հավաք են անցկացնում՝ նախապատրաստվելով մայիսի 6-19 Թբիլիսիում կայանալիք շախմատի Եվրոպայի անհատական առաջնությանը: Բացի նրանցից, Թբիլիսիում Հայաստանից հանդես կգան նաեւ Անահիտ Խառատյանը, Լիա Մարտիրոսյանը, Աննա Հայրապետյանն ու Մարիա Գեւորգյանը**

## Հայ պատանիները եզրափակեցին աղյուսակը

**Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը Ղազախստանի նախագահի գավաթի խաղարկության նախնական փուլի ավարտական խաղում 0-2 հաշվով զիջելով թուրքերին, 1-ին խմբում գրավեց վերջին՝ 4-րդ տեղը: Այժմ մեր պատանիները կվիճարկեն 7-8-րդ տեղերը: Հիշեցնենք, որ առաջին խաղում ՀՀ հավաքականը 3-5 հաշվով զիջել էր վրացիներին, այնուհետեւ 2-0 հաշվով հաղթել էր Ուկրաինայի հավաքականին: Վերջինս ավարտական տուրում 1-0 հաշվով հաղթեց Վրաստանի հավաքականին:**

## Մրցահարթակ դուրս կգան 8 ծանրորդներ

**Պատանի 8 հայ ծանրորդներ Հայաստանը կներկայացնեն մայիսի 8-14-ը Պերուի մայրաքաղաք Լիմայում կայանալիք ծանրամարտի մինչեւ 17 տարեկանների աշխարհի առաջնությունում: Ինչպես եւ նախորդ մրցաշարերում, առաջիկա մրցումներում էլ հայ ծանրորդներից մեդալների ակնկալիքներ կան:**



**Հավաքականի գլխավոր մարզիչ Էդուարդ Կիզողյանի գլխավորությամբ պատանի ծանրորդներն ուսումնամարզական հավաք են անցկացրել Ծաղկաձորում, իսկ մրցումների նախապատրաստության վերջին փուլի պարապմունքները տեղի են ունենում Աբովյանում:**

**Պերուում մրցահարթակ դուրս կգան Ժորժ Եղիկյանը (56 կգ), Անդրանիկ Կարապետյանը (62 կգ), օլիմպիական խաղերի չեմպիոն Իսրայել Միլիտոսյանի որդին՝ 16-ամյա Վարդան Միլիտոսյանը (69 կգ), Ռազմիկ Օլեցյանը (77 կգ), Մհեր Պողոսյանը (94 կգ) եւ գերծանրքաշային Գոռ Մինասյանը:**

## ՈՒԵՖԱ-ն կպատժի «Ռեալին» ու «Բարսելոնին»

**ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն մտադիր է պատժամիջոցներ կիրառել «Ռեալի» եւ «Բարսելոնի» նկատմամբ չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ առաջին խաղում տեղի ունեցած միջադեպերի առիթով: «Ռեալը» կարող է պատժվել թիմի երկրպագուների անվայելուչ պահվածքի համար, որոնք տարբեր առարկաներ են նետել ու մտել են խաղադաշտ: Բացի այդ, պատժամիջոցներ կկիրառվեն Պեպեի եւ Ժոզե Մոուրինյոյի նկատմամբ: «Բարսելոնն» էլ համապատասխան պատիժ կկրի պահեստային դարպասապահ Պինտոյի հեռացման համար:**

**«Բարսելոնի» ղեկավարությունն էլ իր հերթին պատրաստվում է դիմել ՈՒԵՖԱ մամուլի ասուլիսում Ժոզե Մոուրինյոյի մեղադրանքների առիթով: Հիշեցնենք, որ «Ռեալի» գլխավոր մարզիչը խստորեն քննադատել էր հանդիպման մրցավարներին, նշել էր, որ Խոսեպ Գվարդիոլան ազնիվ պայքարում չի հաղթում:**

**ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն մտադիր է պատժամիջոցների հարցին անդրադառնալ մայիսի 6-ին, կիսաեզրափակիչ 2-րդ հանդիպումից հետո:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«ԵՎՐՈՏԵՍԻԼ»

# Orange-ում հաջողություններ մաղթեցին Էմմիին Դյուսելդորֆ մեկնելուց առաջ

## *Orange-ը մայիսին նախատեսել է բազմաթիվ եվրոտեսիլյան անակնկալներ*

Երեկ Orange-ի գլխավոր խանութում տեղի ունեցավ «Եվրոտեսիլ 2011»-ում Հայաստանի ներկայացուցիչ Էմմիի հանդիպումը լրագրողների եւ երկրպագուների հետ, որը երգչուհու վերջին հանդիպումն էր Դյուսելդորֆ մեկնելուց առաջ: Վաղը Էմմին արդեն կլինի Գերմանիայում՝ մասնակցելու փորձերին եւ պատրաստվելու եվրոպական այս մեծ երաժշտական մրցույթին:

Հանդիպման ընթացքում Orange-ը, որն արդեն երկրորդ տարին անընդմեջ Եվրոտեսիլի գլխավոր գործընկերն է Հայաստանում, ներկայացրեց նաեւ այն միջոցառումներն ու անակնկալները, որ սպասում են Եվրոտեսիլի երկրպագուներին մայիս ամսվա ընթացքում:

«Մենք հպարտ ենք արդեն երկրորդ անգամ աջակցել այս համաեվրոպական տոնին Հայաստանում: Սա կարեւոր մրցույթ է, որը թույլ է տալիս տաղանդավոր կատարողներին հայտնի դառնալ ամբողջ Եվրոպայում, միաժամանակ նպաստում է երկրի ճանաչմանը: Orange-ի աջակցությամբ այս տարի Հայաստանի ներկայացուցիչը բազմաթիվ պրոմո-այցելություններ ունեցավ եվրոպական տարբեր երկրներ, իսկ նրա տեսահոլովակը շրջում է բազմաթիվ երկրների հեռուստաեթերում եւ բազմաթիվ ինտերնետային կայքերում: Վստահ եմ, որ այս այցելությունների ու մեր բոլորի համատեղ ջանքերով Հայաստանը բարձր միավորներ կստանա», ասաց Orange Արմենիայի մարքեթինգի տնօրեն **Արամ Մկրտչյանը**:

Orange-ը հատուկ անակնկալ էր պատրաստել Հայաստանում «Եվրոտեսիլի» թերեւս ամենամեծ երկրպագուի՝ տասնութամյա Մարիամ Ալեքսանյանի համար, որն Orange-ից ստացավ «Եվրոտեսիլի» ուղեգիր: Մարիամն արդեն մի քանի տարի է, ինչ Եվրոտեսիլի երկրպագուների հայկական ցանցի ակտիվ անդամներից է: Այս խմբի ներկայացուցիչներին, որոնք «Եվրոտեսիլին» Հայաստանի մասնակցության առաջին տարվանից ի վեր իրենց շուրջն են համախմբում մրցույթի սիրահարներին եւ բոլոր միջոցներով աջակցում Հայաստանի ներկայացուցիչներին, դեռ անցյալ տարվանից նկատել էին Orange-ում: Խումբն այս տարի ցանկանում է գրանցվել «Եվրոտեսիլի» երկրպագուների միջազգային կազմակերպությունում (Organisation Générale des Amateurs de l'Eurovision), ինչի համար այս ուղեւորությունն ավելի քան կարեւոր է:

«Մեզ համար մեծ ուրախություն է օգնել այս երիտասարդներին իրականացնել իրենց երազանքները: Սրանով մենք նաեւ կօգնենք OGAE-ին կայանալ եւ ավելի ուժեղանալ Հայաստանում: Սակայն նրանք, ովքեր չեն մեկնի Դյուսելդորֆ, նույնպես կդառնան «Եվրոտեսիլ» տոնի մասնակիցը: Ինչպես անցյալ տարի, այս տարի նույնպես Հայաստանի երկու քաղաքներում Orange-ը նախաձեռնել է «Եվրոտեսիլի» հանրային դիտում, որը հնարավորություն կտա բոլոր երաժշտասերներին միասնաբար աջակցել Հայաստանին», ասաց ընկերության Մարքեթինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Եզրափակիչի հեռարձակման օրը՝ մայիսի 14-ը, անմոռանալի կդառնա Երեւանի եւ Վանաձորի բնակիչների համար նոր գույներով եւ բազմաբնույթ իրադարձություններով: Երեւանում տեղի կունենա «եվրոտեսիլյան» համերգ, որի ժամանակ ելույթ կունենան հայկական էստրադային երգիչներ, ինչպես նաեւ նախորդ տարիներին «Եվրոտեսիլին» մասնակցած հայտնի կատարողներ, իսկ վանաձորցիները մինչեւ ուղիղ հեռարձակման սկիզբը կմասնակցեն անակնկալներով լի բացօթյա երաժշտական միջոցառման հայտնի DJ-ների երաժշտական մշակումներով:

Այսօրվանից արդեն Boom-Boom երգը հասանելի է Orange-ի երաժշտական տարբեր պլատֆորմներում. այն կարելի է բեռնել WAP պորտալից, ինչպես նաեւ՝ որպես Սպասազանգ:


## Հայտարարություն

Սույն թվականի մայիսի 5-ին, ժամը 12:00–ին ՀՀ Կոտայքի մարզի Կարենիսի գյուղապետարանում տեղի կունենա «ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող Գյումուշի պ/կայանի և սանգոտիների վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում կամ Աբովյան 66ա: Հեռ. 22-14-85, 569392





# Ականավոր գիտնականը եւ քաղաքացին

## *Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի ծննդյան 75-ամյակի առթիվ*

**2011**թ. մայիսի 1-ին լրանում է հայրենական գիտության, մասնավորապես ռադիոֆիզիկայի բնագավառի խոշոր գիտնական, գիտակրթական ասպարեզի հիմնադիր կազմակերպիչ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ճանաչված հասարակական գործիչ **Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի** 75-ամյակը:

Ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանը ընդգրկուն գիտակրթական անխոնջ գործունեությամբ բարձր գնահատանքի եւ խորին հարգանքի է արժանացել մտավորականության եւ հասարակության լայն շրջաններում:

Նա այդ վաստակին հասավ կենդարյա դժվարին, լարված ու պատասխանատու աշխատանքներում՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի փոխտնօրենի, ավելի քան քառորդ դարվա տնօրենի, մայր բուհի ռեկտորի, ազգային ակադեմիայի նախագահի պաշտոններում՝ ամենուրեք դրսեւորելով անմնացորդ նվիրում, բարձր պատասխանատվություն եւ հաստատակամություն:

Ռ. Մարտիրոսյանի համար բախտորոշ նշանակություն ունեցավ ասպիրանտական ուսումնառումը եւ մասնագիտացումը Մոսկվայում: Նրա գիտական ղեկավարությունը ստանձնեց համաշխարհային անուն վաստակած, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ա. Մ. Պրոխորովը:

Լայն ու հիմնավոր պատրաստություն ստանալով՝ հենց այստեղ կատարեց մի շարք գիտական ուշագրավ հետազոտություններ եւ դարձավ ռադիոաստղագիտության բնագավառում քվանտային ուժեղարարների կիրառման առաջամարտիկներից մեկը: Նրա կողմից մշակված 21սմ ալիքի երկարության քվանտային ուժեղարարը Խորհրդային Միությունում առաջինն է կիրառվել ռադիոաստղագիտության մեջ:

1964 թվականից Ռ. Մարտիրոսյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հայրենիքում՝ ՀՀ ԳԱԱ-ի նորաստեղծ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտում՝ ստեղծելով գիտական նոր ուղղություն՝ կապված էլեկտրամագնիսական ալիքի գերբարձր հաճախականությունների տարբեր տիրույթներում քվանտային ուժեղարարների ստեղծման համար անհրաժեշտ նոր ակտիվ նյութերի ուսումնասիրման հետ: Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացրել ռելաքսացիոն հավանականությունների վրա հիմնված ակտիվ բյուրեղների ուժեղարարային բնութագրերի որոշման՝ Ռ. Մարտիրոսյանի զարգացրած նոր մեթոդը եւ այդ մեթոդի վրա հիմնված պարամագնիսական բյուրեղների բազմակողմանի հետազոտությունները:

Ռ. Մ. Մարտիրոսյանն առաջարկել եւ գործնականում իրականացրել է քվանտային ուժեղարարների էֆեկտիվության մեծացման նոր եղանակներ: Նա առաջինն է հետազոտել երկու տարբեր հաճախություններով ազդանշանների միաժամանակյա ուժեղացում ապահովող ինվերսիայի եղանակը եւ այն փորձնականորեն իրականացրել ալիքի երկարության 21սմ եւ 3սմ տիրույթներում:

Ալիքի երկարության միլիմետրանոց տիրույթի քվանտային ուժեղարարների ֆիզիկական հիմունքների հիմնարար հետազոտություններին նվիրված Ռ. Մարտիրոսյանի աշխատանքների շարքն արժանացել է Ուկրաինայի Պետական մրցանակի գիտության եւ տեխնիկայի ասպարեզում:

Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է մի շարք միջազգային եւ միութենական ծրագրերի: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծված գերբարձր հաճախականություններով աշխատող բարձր զգայնությամբ ռադիոհամակարգերը լայնորեն կիրառվել են երկրի բնական պաշարների ուսումնասիրման Ինտերկոսմոս, Պրիրոդա, Օկեան տիեզերական ծրագրերում: Ինստիտուտում մշակված գիտական սարքավորումները հաջողությամբ կիրառվել են ռադիոաստղագիտական, բժշկակենսաբանական եւ այլ հետազոտություններում:

Հատկապես արգասաբեր է եղել Ռ. Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրման ծրագրին, մասնավորապես՝ Վեգա նախագծի իրականացմանը:

Մեծ զգայնությամբ ԳԲՀ ընդունիչ համակարգերի մշակման եւ ներդրման Ռ. Մարտիրոսյանի եւ նրա աշակերտների աշխատանքների շարքն 1988 թ. արժանացել է գիտության եւ տեխնիկայի ասպարեզում ՀՀ Պետական մրցանակի:

Սկսած 1987թ. ՌՖԷԻ-ում Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ կատարվել են բարձրջերմաստիճանային գերհաղորդականությանը նվիրված հիմնարար եւ կիրառական բնույթի հետազոտություններ:

Ռ. Մարտիրոսյանը ստեղծել է իր գիտական դպրոցը: Նա իր բեղմնավոր գիտական գործունեությունը մշտապես զուգակցել է մանկավարժական աշխատանքի հետ:

1965 թվականից մինչ օրս Ռ. Մարտիրոսյանը ԵՊՀ-ում դասավանդում է ռադիոֆիզիկայի ընդհանուր եւ հատուկ դասընթացներ: Նրա նախաձեռնությամբ 1983թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվել է ԳԲՀ ռադիոֆիզիկայի ամբիոն (ներկայումս՝ ԳԲՀ ռադիոֆիզիկայի եւ հեռահաղորդակցության ամբիոն), որը Ռ. Մարտիրոսյանը ղեկավարում է մինչ օրս:

1993թ. ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է Երեւանի պետական համալսարանի ռեկտոր: Կարճ ժամանակում նա մշակել է գիտական հետազոտությունների եւ կրթության նյութատեխնիկական բազայի զարգացման հետ կապված դժվարությունների հաղթահարման եւ բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ծրագրեր:

Նրա ղեկավարման տարիներին ԵՊՀ-ում բացվել են նոր մասնագիտացումներ եւ ֆակուլտետներ, ուսանողության թիվն աճել է շուրջ երկու անգամ:

Օգտվելով անկախության ընձեռած հնարավորություններից՝ Ռ. Մարտիրոսյանը կապեր հաստատեց եւ արդյունավետ համագործակցություն ստեղծեց տարբեր երկրների մի շարք նշանավոր համալսարանների հետ:

Անգամ ռեկտորների խորհուրդը, որն անվանական, ձեւական մի կազմակերպություն էր, նրա նախաձեռնության շնորհիվ դարձավ գործուն ու կենսունակ հաստատություն:



2006թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ: Հետխորհրդային տարածքում գիտության եւ գիտական գործունեության խաթարված վարկը, թերֆինանսավորումը, մասնագետների արտահոսքը պահանջում էին ակադեմիայի կառուցվածքի օպտիմալացման, նոր պայմաններում գիտական հետազոտությունների իրավական հենքի ստեղծման, զարգացման հեռանկարային ուղղությունների կանխորոշման հետ կապված վերափոխումներ:

Անցած հինգ տարիների ընթացքում ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ եւ ակտիվ մասնակցությամբ կատարվեցին կարեւոր քայլեր ակադեմիական հանրության համախմբման, ՀՀ ԳԱԱ համակարգի, նրա ներուժի պահպանման գործում: Դրանք ներառում են օրենսդրական ծրագրի իրականացման, տնօրենների կորպուսի երիտասարդացման, հեռանկարային գիտական ուղղությունների ճշգրտման, միջազգային համագործակցության, նոր տեխնոլոգիաների ներդրման եւ այլ ոլորտներ: Մշակվել եւ Ազգային ժողովի կողմից հաստատվել է ՀՀ ԳԱԱ-ի մասին օրենքը եւ ճշտվել նրա հատուկ կարգավիճակը:

Ռ. Մարտիրոսյանն ավելի քան 200 գիտական աշխատությունների, Շվեդիայում եւ ԱՄՆ-ում հրատարակված երկու մենագրությունների հեղինակ է: Նրա գիտակազմակերպական ու մանկավարժական գործունեությունը արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի բարձր կառավարական պարգեւների:

Գիտական հասարակությունը, բարեկամները եւ գործընկերները սրտանց շնորհավորում են Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի փառավոր հոբելյանը եւ ցանկանում առողջություն ու ստեղծագործական հաջողություններ:

**ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս**
**Յու. Շուքուրյան**
**ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս**
**Յու. Չիլինգարյան**

*«Ազգ»-ի խմբագրությունը միանում է շնորհավորողներին:*

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: